Amundi
Investment Solutions

Trust must be earned

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2025թ. հունիս

1- Մեր հանձնառությունները **4**

2- Մեր վարվելակերպի կանոնների կիրառությունը **5**

3- Մեր վարքականոնները **8**

Ամենօրյա էթիկական վարք

Մեր վարքականոնները հաճախորդների եվ մատակարարների հետ հարաբերություններում

1. Հաճախորդների հետ հարաբերություններ 12
2. Հաճախորդների անձնական տվյալներ 13
3. Մատակարարի արդար և անկողմնակալ ընտրություն 14
4. Պատասխանատու հարաբերություններ մատակարարի հետ 15
5. Մրցակցություն 16

Մեր վարվելակերպի կանոնները բնապահպանական, սոցիալական եվ կառավարչական խնդիրների վերաբերյալ

6. Աշխատակիցների տվյալների պաշտպանություն 18
7. Առողջությունն ու անվտանգությունն աշխատավայրում 19
8. Խտրականության բացառում 20
9. Բազմազանություն և գենդերային հավասարություն 21
10. Պայքար ոտնձգությունների դեմ 22
11. Զբաղվածությունը մասնագիտական գործունեությունից դուրս 23
12. Բնապահպանական ռազմավարությունը 24

Մեր վարվերալակերպի կանոնները հակակոռուպցիայի վերաբերյալ

13. Պայքար կաշառակերության դեմ 26
14. Պետական պաշտոնյաների հետ հարաբերություններում նրանց ազդեցության չարաշահման դեմ պայքար 27
15. Պայքար ընթացակարգերի պարզեցման համար կատարվող վճարումների դեմ 28
16. Շահերի բախում 29
17. Նվերներ և հրավերներ 30
18. Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորում եվ լոբբինգ 31
19. Պատրոնաժ եվ բարեգործական գործունեություն 32
20. Հովանավորչություն 33

Մեր վարվելակերպի կանոններն ուղղված «ԱՄՈՒՆԴԻ»-ի և նրա հեղինակության պաշտպանությանը

21. Գաղտնիություն 35
22. Պայքար փողերի լվացման եվ ահաբեկչության ֆինանսավորման դեմ 36
23. Պայքար հարկերից խուսափելու դեմ 37
24. Միջազգային պատժամիջոցներ 38
25. Խարդախության կանխարգելում 39
26. Շուկայի չարաշահման կանխարգելում 40
27. Սոցիալական ցանցերից օգտվելը 41

Մեր պատասխանատվության հիմքում՝ որպես ակտիվների կառավարիչ, ընկած է մեզանից յուրաքանչյուրի բարոյական և օրինակելի գործելակերպի ապահովումը, որը և մեր հաճախորդների վստահության հիմնասյուներից մեկն է:

Այս պատասխանատվությունն ավելի է մեծանում մեր ունեցած դիրքով՝ որպես ակտիվների կառավարման եվրոպական առաջատար և կայուն ներդրումների մեր հանձնառությամբ:

Մեր վարքագծի կանոնները կօգնեն ամրապնդել բիզնեսի զարգացումը՝ հօգուտ մեր հաճախորդների, բաժնետերերի և աշխատակիցների:

Վալերի Բուդսոն,

«Ամունդի»-ի Գլխավոր գործադիր տնօրեն

1

Մեր հանձնառությունները

2017 ԹՎԱԿԱՆԻՆ «ԿՐԵԴԻ ԱԳՐԻԿՈԼԸ» ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ Է ՄՇԱԿԵԼ ԻՐ ԲՈԼՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ՀԻՄՆՎԱԾ Է ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎՐԱ: ԿԱՆՈՆԱԳԻՐՔՆ ԱՄՓՈՓՈՒՄ Է ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆՎԵՆ ԽՄԲԻ ԲՈԼՈՐ ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ, ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՈՒ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ:

«Ամունդի»-ի վարքագծի կանոնագիրքը գործնական կիրառության մեջ է դնում Էթիկայի կանոնագրքի հանձնառությունները և նախատեսված է ուղղորդելու մեր ամենօրյա գործողությունները, որոշումները և վարքագիծը: Սա Ընկերության տարբեր բիզնեսի ուղղությունների (մանրածախ և ինստիտուցիոնալ մարքեթինգ, գնումներ, համապատասխանություն, իրավաբանական, մարդկային ռեսուրսների կառավարում, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հաղորդակցություն եւ այլն) միջև առկա համագործակցային մոտեցման արդյունքն է:

Բացի օրենսդրական, կարգավորող և մասնագիտական կանոններին համապատասխանությունից, վարքագծի կանոնագիրքը, որը կիրառվում է մեր բոլոր գործողությունների նկատմամբ, արտացոլում է մեր հանձնառությունն իրականացնելու մեր գործունեությունը ամենաբարձր էթիկական չափանիշներին համապատասխան և արհեստավարժությամբ, ինչպես նաև գործելու՝ ելնելով մեր հաճախորդների լավագույն շահերից:

2

Վարվելակերպի կանոնագրքի կիրառությունը

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ԳՈՐԾԻՔ Է ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑ, ՈՐԸ ՄՇԱԿՎԵԼ Է ՀԱՏԱԿԵՑՆԵԼՈՒ ՄԵՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԶ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԱՐՎԵԼ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ԴԱ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ «ԱՄՈՒՆԴԻ»-Ի ԵՎ «ԿՐԵԴԻ ԱԳՐԻԿՈԼ ԽՄԲԻ» ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԵՐԻՆ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ:

Ու՞մ համար է նախատեսված կանոնագիրքը:

Վարվելակերպի կանոնագիրքը տարածվում է Ընկերության բոլոր աշխատակիցների վրա՝ տնօրեններ, ղեկավարներ, աշխատակիցներ, անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից և «Ամունդի» ընկերությունում ունեցած դերից, ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ այլ երկրներում:

Որո՞նք են նպատակները և ինչպե՞ս պետք է մեկնաբանել կանոնագիրքը:

Վարվելակերպի կանոնագիրքը մշակվել է, որպեսզի ուղղորդի մեր գործողությունները և օգնի մեզ որոշումներ կայացնել օրենքին, մեր էթիկական չափանիշներին և մեր արժեքներին համապատասխան:

Այն ըստ թեմաների բացատրում է մասնագիտական վարքագիծը, որին պետք է հետևել և խրախուսել մեր պարտականությունները կատարելիս և մեր աշխատանքային հարաբերություններում:

Տարաբնույթ թեմաները դասակարգված են չորս բաժինների. «հաճախորդների և մատակարարների միջև փոխհարաբերություններ», «սոցիալական, բնապահպանական և հանրային հարցեր», «կոռուպցիայի դեմ պայքար», «Ամունդիի և նրա հեղինակության պաշտպանություն»: Նշենք, որ շահերի բախումը դիտարկվcում է «կոռուպցիայի դեմ պայքար» բաժնում:

Գործնական օրինակները նպատակ ունեն ներկայացնելու սույն կանոնագրքում ներկայացված սկզբունքները: Այնուամենայնիվ, Վարվելակերպի կանոնագիրքը նպատակ չի հետապնդում ունենալ սպառիչ բնույթ: Այն նաև չի հավակնում պատասխանել բոլոր հարցերին կամ դիտարկել բոլոր հնարավոր դեպքերը, մասնավորապես այն, ինչ Դուք պետք է անեք և չպետք է անեք: Այդ իսկ պատճառով բոլոր իրավիճակներում և որոշումներ կայացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ինքն իրեն տա հետևյալ հարցերը.

Հինգ հարց ուղղված ապահովելու էթիկապես ճիշտ վարքագիծ



Եթե այդ հարցերից որևէ մեկի պատասխանը «ոչ» է, կամ եթե կասկածում եք, դուք պետք է քննարկեք այն նախքան որևէ գործողություն կատարելը: Դուք կարող եք քննարկել այն Ձեր ղեկավարի հետ կամ դիմեք համապատասխանության, մարդկային ռեսուրսների կառավարման, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության, իրավաբանական կամ ցանկացած այլ բաժին, որը մասնագիտացած է տվյալ խնդրի լուծման և դրանց հաշվառումը կազմակերպելու գործում:

Ո՞վ է վերահսկում այս կանոնագրքի կատարումը և ո՞վ է այն թարմացնում

Վարվելակերպի կանոնագրքի իրականացման, վերահսկման և թարմացման համար պատասխանատու է համապատասխանության/կորպորատիվ սոցիալական պատասխանատվության թիմը: Տնօրենների խորհուրդը ստանում է հաշվետվություն այս գործընթացի վերաբերյալ:

Կանոնագրքի բովանդակությունը կարող է փոփոխվել ժամանակի ընթացքում: Այն չի փոխարինում «Ամունդի»-ի ներքին կանոնակարգերին և ընթացակարգերին: Դրանց հետամուտ լինելն ու կիրառելը Ձեր պարտականությունն է և Ձեր պատասխանատվության դաշտում է:

Ինչպե՞ս է ապահովվում Վարվելակերպի կանոնագրքի հասանելիությունը

Այն հրապարակվում և ներկայացվում է շահագրգիռ կողմերին: Այն հասանելի է «Ամունդի»-ի կայքում և ներքին ցանցում:

Որո՞նք են աշխատակիցների պարտականությունները

Յուրաքանչյուր ոք պետք է ծանոթանա Վարվելակերպի կանոնագրքում շարադրված սկզբունքներին և հավատարիմ մնա դրանց իր պարտականությունների կատարման ժամանակ:

Յուրաքանչյուր ոք պետք է փոխանցի և խրախուսի Վարվելակերպի կանոններում ամրագրված արժեքների ու սկզբունքների պահպանումը՝ զգոնությամբ և բարի մտադրություններով:

Բացի այդ, բոլորը պետք է հետևեն Վարվելակերպի կանոնագրքի թեմաների վերաբերյալ առաջարկվող ուսումնական ծրագրերին:

Հիմնական կանոններից մեկը, որը պետք է հիշել, այն է, որ երբ դուք նկատում կամ կասկածում եք անպատշաճ գործողություն կամ վարքագիծ, կամ եթե դուք ճնշում եք զգում, դուք պետք է անմիջապես քննարկեք այն Ձեր ղեկավարի կամ համապատասխան բաժնի հետ:

Ի՞նչ է «whistleblowing»-ի գործընթացը

Whistleblowing համակարգի նպատակն է ուժեղացնել ռիսկերի կանխարգելումը՝ Ամունդի խմբի բոլոր աշխատակիցներին կամ գործող օրենսդրությամբ ընդգրկված այլ անձանց հնարավորություն տալով հայտնել այնպիսի միջադեպերի մասին, ինչպիսիք են հանցագործությունները, իրավախախտումները կամ այլ լուրջ խնդիրներ, որոնք գտնվում են ահազանգման ընթացակարգի շրջանակներում՝ համաձայն Ֆրանսիայի Վասերմանի մասին օրենքի դրույթների, որոնք ուժեղացնում են ահազանգողների պաշտպանությունը:

Այն դեպքում երբ ահազանգողը համարում է, որ հիերարխիկ ուղիներով հայտնելը նպատակահարմար չէ, Ամունդին ստեղծել է ներքին ահազանգման համակարգ՝ ահազանգերի մասին ծանուցումներ հավաքելու համար: BKMS® SYSTEMS ահազանգման հարթակը հասանելի է 9 լեզուներով և մատչելի է 24/7 հետևյալ հղումով՝ https://www.bkms-system.com/Groupe-Credit-Agricole/%20ethic-alerts

Այս գործիքը երաշխավորում է խիստ գաղտնիության միջավայր: Ահազանգի վերաբերյալ տվյալները մշակվելուց հետո անանունացվում և արխիվացվում են:

Ղեկավարի դերն ու ակնկալիքները

Որպես ղեկավար, դուք պետք է համոզվեք, որ Ձեր թիմերը գիտեն, որ դուք միշտ պատրաստ եք լսել նրանց կարիքները և ստեղծել վստահության մթնոլորտ, որպեսզի նրանք, խնդիրներ ունենալու դեպքում, առանց վարանելու դիմեն Ձեզ՝ խորհուրդ ստանալու համար:

Դուք պետք է կարողանաք բացատրել ձեր թիմին, թե ինչպես և որ դեպքերում է Վարվելակերպի կանոնները կիրառելի իրենց պարագայում:

Եթե Դուք ունեք որևէ հարց, մի հապաղեք դիմել այն բաժին, որն առավել մասնագիտացված է տվյալ խնդիրը լուծելու գործում (համապատասխանություն, մարդկային ռեսուրսներ եւ այլն):

Դուք պետք է լինեք զգոն, գործեք թափանցիկ և օրինակ ծառայեք ձեր թիմերի համար: Ցույց տվեք, որ միանգամայն հնարավոր է հասնել դրված նպատակներին՝ պահպանելով «Ամունդի»-ի և «Կրեդի Ագրիկոլ Խմբի» էթիկան և արժեքները:

Շրջանակը

1. Սույն Վարվելակերպի կանոնագիրքը տարածվում է բոլոր նրանց վրա, ովքեր աշխատում են «Ամունդի» ընկերությունում՝ Ֆրանսիայի և արտերկրի իր բոլոր գրասենյակներում:

2. Որոշ կոնկրետ դրույթներ կարող են կիրառելի լինել որոշակի երկրներում:

3. Տեղական մակարդակում լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք հղում կատարել տեղում կիրառելի փաստաթղթերին և քաղաքականությանը:

Նշումներ

- «Ամունդի» տերմինը վերաբերում է «Ամունդի Խմբի» բոլոր կազմակերպություններին Ֆրանսիայում և արտերկրում:
- «Աշխատակից» տերմինը սույն փաստաթղթում օգտագործվում է լայն իմաստով՝ ներառելով ցանկացած անձի, անկախ նրա կարգավիճակից, որը նպաստում է «Ամունդի»-ի գործունեությանը:

3
Մեր վարքականոնները

Ամենօրյա էթիկական գործելաոճ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Էթիկան բարոյականության ոլորտի մաս է կազմում, որը վերաբերում է արժեքներին, մասնավորապես՝ Ընկերության արժեքներին: Այս արժեքները պետք է լինեն մեր որոշումների և մեր մասնագիտական վարքագծի հիմքում: Հանդիսանալով մեր գործունեությունը ձևավորող մասնագիտական վարքագծի կանոնների հիմք՝ նրանք սահմանում են մեր էթիկական մոտեցումը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Էթիկական նորմերը վերաբերում են՝

- Ընկերության հատուկ արժեքներին, որոնք ձեւակերպված են ընդհանուր հասկացությունների տեսքով (օրինակ՝ հարգանք այլոց նկատմամբ, համերաշխություն և այլն) և դարձել են ընկերության «գործողությունների սկզբունքներ» (օրինակ, խտրականության դեմ պայքար):
- Կորպորատիվ կառավարման բարձրագույն մարմնի կողմից այս արժեքների և էթիկական շրջանակների հաստատմանը և ընդունմանը:
- արժեքները, սկզբունքները և վարվելակերպի կանոնները տարածելու և կիրառելու ընդհանուր առաքելությանը՝ այնպես, որ էթիկական շրջանակները ծառայեն Ընկերությանը պատկանելության և վստահության զգացողության ապահովմանը, որն անհրաժեշտ է աշխատավայրում գործունեության և շահակիրների հետ հարաբերություններում
  վստահության զգացողության ապահովման համար:

Համապատասխանությունը վերաբերում է՝

կարգավորվող միջավայրին՝ պահպանելով ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կիրառելի կանոնները, ինչպես նաև այդ նպատակին հասնելուն հետևյալ միջոցները՝

- Ընկերության օրենքներում և կանոնակարգերում ներառված ներքին կանոնների եւ ընթացակարգերի իրականացում:
- Ավագ ղեկավարի կողմից իրականացվող հանձնարարականների և վերահսկողական գործառույթի առկայությունը, որը թույլ է տալիս Ընկերությանը կանխել անհամապատասխանությունից բխող լուրջ ռիսկերը, հատկապես կարգավորվող գործարար ոլորտներում:



Էթիկան նպաստում է արժեքների և վարքագծի կանոնների պահպանմանը:



Համապատասխանության նպատակն է կանխել նորմերի և օրենքի խախտումները՝ Ընկերությանը պատժամիջոցներից և նրա համբավը կամ բրենդի իմիջը ցանկացած ռիսկից պաշտպանելու համար:

Էթիկապես ճիշտ գործել նշանակում է

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԻՆԵԼ ՄԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բոլոր հարաբերությունները պետք է հաստատվեն հավատարմության և համերաշխության սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև մեր հաճախորդների և մատակարարների առջև ստանձնած հանձնառություններին համահունչ: Որոշումները պետք է կայացվեն՝ հաշվի առնելով հաճախորդների շահերի գերակայությունը, մատակարարների արդար և իրավահավասար ընտրության սկզբունքը և մրցակցության կանոնների պահպանումը:

ԱՆՀԱՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔ

Ինչ վերաբերում է Ընկերության աշխատակիցների կամ նրա ցանկացած շահառու կողմի հետ հարաբերություններին, ապա մարդու իրավունքները և մարդկանց հիմնարար սոցիալական իրավունքները պետք է խստորեն պահպանվեն: Խտրականության կամ ոտնձգության բոլոր ձևերի կանխարգելում, բազմազանության և գենդերային հավասարության խրախուսում, առողջության և անվտանգության միջոցառումների պահպանում, ինչպես նաև աշխատակիցների և հաճախորդների տվյալների պաշտպանության ապահովում: Հետևելով այս սկզբունքներին, ստեղծում ենք բարենպաստ աշխատանքային միջավայր, որը կատարողականի բարձրացման և գոհունակության հիմքն է:

ՀԱՐԳԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպես պատասխանատու ֆինանսական կազմակերպություն գործելը՝ «Ամունդի» ընկերության զարգացման ռազմավարության հիմնական հանձնառություններից է: Այս հանձնառությունն արտացոլվում է մեր պատասխանատու կառավարման և մեր հաճախորդների կարիքներին համահունչ պատասխանատու ներդրումային լուծումներ առաջարկելու մեջ:

Լինելով պատասխանատու ներդրումների ոլորտում առաջամարտիկ՝ «Ամունդին» վարում է քաղաքականություն, որի նպատակն է՝

- Ներառել բնապահպանական, սոցիալական և կառավարչական չափանիշները (ԲՍԿ) իր կառավարման ռազմավարություններում՝ ի լրումն ավանդական ֆինանսական վերլուծության:
- Իրականացնել կոնկրետ նախաձեռնություններ՝ որոշակի ոլորտներում, հատկապես շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ներդրումների խրախուսման համար:
- Աջակցել սոցիալական եւ համերաշխ տնտեսությանը:

«Ամունդի»-ի պատասխանատվությունն է նաև սեփական գործողություններում կայուն զարգացման սկզբունքների կիրառումը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Կոռուպցիայի դեմ պայքարը կարևորագույն նպատակ է, որը կապված է հանրային օգուտի հետ և հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են ազնվությունը, անաչառությունը, հավատարմությունը, թափանցիկությունը և անկողմակալությունը:

Հակակոռուպցիոն բաղադրիչը ներառում է «զրոյական հանդուրժողականության» սկզբունքի կիրառման միջոցով կոռուպցիոն գործելակերպի և ազդեցության չարաշահման կանխման, բացահայտման և կասեցման ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացման հիմնարար սկզբունքները: Այլ ուղղությունները ներառում են նվերներ և հրավերներ, խրախուսական վճարներ, շահերի բախում, հովանավորչություն և լոբբինգ:

ԼԻՆԵԼ ԶԳՈՆ ԱՄԵՆ ՕՐ

Վստահությունը պահպանելու համար մենք պետք է պատասխանատու լինենք Ընկերության առկա ռեսուրսների և տեղեկատվության օգտագործման համար, ինչպես նաև զգուշանանք շահերի բախման բոլոր ռիսկերից: Մենք նաև պետք է քայլեր ձեռնարկենք, որ ոչ պատշաճ կերպով մեր անձնական նպատակներից ելնելով կամ երրորդ կողմի անունից չտարածենք կամ չօգտագործենք որևէ գաղտնի տեղեկատվություն:

Զգոնությունը պետք է մեզ թույլ տա պաշտպանել մեր հաճախորդների շահերը, պայքարել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ, պահպանել միջազգային պատժամիջոցների մասին օրենքը, պայքարել հարկերից խուսափելու դեմ, կանխել խարդախությունը և պաշտպանել շուկայի անաչառությունը:

ԶԵՌՆՊԱՀ ՄՆԱԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՎՆԱՍԵԼ «ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆԸ

Մենք բոլորս պատասխանատու ենք «Ամունդի»-ի իմիջի համար ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ դրանից դուրս: Բացասական գովազդի ռիսկը, հատկապես սոցիալական ցանցերում, կարող է պոտենցիալ կերպով արատավորել «Ամունդի»-ի իմիջը և խաթարել մեր հաճախորդների վստահությունը մեր Ընկերության նկատմամբ:

Այս ռիսկից խուսափելու համար մենք պետք է մտածենք մեր հեղինակության պահպանման մասին՝ հետևելով սույն կանոնագրքում սահմանված բոլոր սկզբունքներին և զերծ մնալով ցանկացած դիտարկումից, որը կարող է հանգեցնել «Ամունդի»-ի համար պարտավորության առաջացմանը, իր մասնագիտական միջավայրի մասին որևէ գաղտնի տեղեկատվություն բացահայտելուն կամ նպաստի անհիմն խոսակցությունների տարածմանը:

ՄԵՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Հաճախորդների հետ հարաբերություններ
2. Հաճախորդների անձնական տվյալներ
3. Մատակարարի արդար և անկողմնակալ ընտրություն
4. Պատասխանատու հարաբերություններ մատակարարի հետ
5. Մրցակցություն

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Խոշոր պոտենցիալ ինստիտուցիոնալ հաճախորդ, որի գործունեության երկրիը գտնվում է «գործարքներ չկնքել» ցուցակում, կապ հաստատեց ինձ հետ, որպեսզի ես կառավարեմ շահութաբեր մի մանդատ: Ի՞նչ պետք է ես անեմ:

→ Նախքան նոր հաճախորդի հետ որևէ գործունեություն դիտարկելը, համապատասխանության բաժնի հետ ստուգեք, որպեսզի համոզվեք, որ այն ներառված չէ «Կրեդի Ագրիկոլ Խմբի» «գործարքներ չկնքել» ցուցակում: Հակառակ դեպքում դուք լիազորված չեք տրամադրել որևէ ծառայություն և պետք է մերժեք ցանկացած առաջարկ:

Դիտարկելով նոր պրոդուկտ ներդնելու իմ առաջարկը՝ «Նոր պրոդուկտների և ծառայությունների հանձնաժողովը» (ՆՊԾՀ) որոշակի պայման առաջ քաշեց: Իմանալով, որ հաճախորդին պետք է այս նոր պրոդուկտը հնարավորինս շուտ, արդյո՞ք վերջինիս կարող եմ այն առաջարկել:

→ Ո՛չ, «ՆՊԾՀ»-ի գործընթացը կարևոր մեխանիզմ է, որն ապահովում է հաճախորդների շահերի պաշտպանությունը՝ խուսափելով հաճախորդներին այնպիսի պրոդուկտներ առաջարկելուց, որոնք կարող են վնասել նրանց: Եթե «ՆՊԾՀ»-ն տալիս է պայմանական համաձայնություն, ապա այն կրում է արգելափակող բնույթ: Հետևաբար, դուք չեք կարող առաջարկել այնպիսի պրոդուկտ կամ ծառայություն, քանի դեռ բոլոր պայմանները չեն բավարարվել:

1 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

«Ամունդի»-ն անհատներին, ինստիտուցիոնալ և կորպորատիվ հաճախորդներին տրամադրում է խնայողությունների և ներդրումների նորարարական լուծումներ, որոնք նրանց կօգնեն բավարարել իրենց կոնկրետ կարիքները, հասնել եկամտաբերության և ընդունելի ռիսկ նպատակներին: Ընկերությունն իր հաճախորդների վստահությունն ու գոհունակությունը դնում է իր նախագծի հիմքում: «Ամունդի»-ն ցանկանում է, որ իր բոլոր աշխատակիցները ներգրավված լինեն այդ հարաբերություններում՝ հաշվի առնելով, որ հաճախորդի շահերը առաջնային են իր աշխատակիցների կողմից իրականացվող բոլոր գործողություններում, ներառյալ նրանց համար, ովքեր աջակցող գործառույթներ են իրականացնում:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լինելով ակտիվների համաշխարհային կառավարիչ՝ «Ամունդի»-ն պատասխանատու կազմակերպություն է, որի նպատակն է հաստատել գլոբալ և կայուն հարաբերություններ իր բոլոր ուղղակի և անուղղակի հաճախորդների (հաստատությունների, կորպորացիաների, գործընկեր ցանցերի, դիստրիբյուտորների և մանրածախ ներդրողների) հետ:

Վստահ լինելու համար, որ իր հաճախորդների ակնկալիքները պատշաճ կերպով արդարացվում են, «Ամունդի»-ն անցկացնում է գոհունակության հարցումներ և մի շարք հետազոտություններ իր հաճախորդների մասնակցությամբ: Հաճախորդների բողոքները մշակվում են որակավորված խմբերի կողմից մեր ծառայությունների որակի շարունակական բարելավման և հաճախորդների հետ հարաբերություններում գերազանցության ձգտելու մղումով:

Աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվում են, անկախ նրանից նրանք անմիջական շփման մեջ են հաճախորդների հետ, թե՝ ոչ: «Ամունդի»-ն ընտրել է դառնալ նաև «Կրեդի Ագրիկոլ Խմբի»-ի նախաձեռնության մի մասը, որը պարբերաբար գնահատում է հաճախորդների առաջարկությունների ինդեքսը:

«Ամունդի»-ն ձգտում է իր ինստիտուցիոնալ հաճախորդների նկատմամբ ամուր հանձնառություն ստանձնել՝ կիրառելով ամբողջական մոտեցում սեփական կորպորատիվ խնդիրների և միջավայրի նկատմամբ: Այս խորը գիտելիքները հիմնված են ճկուն լուծումներ մշակելու, ակտիվների տեղաբաշխման ձեւավորման և անհատական խորհրդատվական ծառայություններ մատուցելու մեր ունակության վրա:

«Ամունդի»-ն հանձն է առել սերտ հարաբերություններ հաստատել ֆոնդերի տեղաբաշխման ցանցերի և դրանց խորհրդատվական խմբերի հետ՝ նպատակ ունենալով զարգացնել վերջիններիս փորձառությունը իր պրոդուկտների և խնայողական լուծումների նկատմամբ: «Ամունդի»-ի տարբեր թիմեր լայնածավալ դասընթացներ են անցկացնում ցանցային խորհրդատուների համար և օգնում ձևավորել խորհրդատուների եւ հաճախորդների համար աջակցության լուծումների լայն շրջանակ:

Ի վերջո, «Ամունդի»-ի հիմնական պարտավորությունն է լինել պատասխանատու ֆինանսական օպերատոր իր հաճախորդների նկատմամբ, որն արտացոլվում է մինչև 2021 թվականը բնապահպանական, սոցիալական և կառավարչական չափանիշները (ԲՍԿ) կառավարման իր բոլոր գործողություններում ինտեգրելու ձգտման մեջ:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Մտածեմ յուրաքանչյուր գործողություն մասին՝ համոզվելու համար, որ այն համապատասխանում է հաճախորդների և ֆոնդերի տեղաբաշխման ցանցերի շահերին, ինչպես նաև «Ամունդի»-ի կարգավորման դաշտին,
- Ուշադիր լինեմ հաճախորդների նկատմամբ և ավելի լավ ճանաչեմ նրանց՝ միաժամանակ հարգելով նրանց անձնական կյանքի իրավունքը՝ նրանց պատշաճ կերպով խորհուրդ տալու և աջակցելու համար,
- Միշտ տրամադրեմ հաճախորդներին և տեղաբաշխման ցանցերի գործընկերներին հստակ և ճշգրիտ տեղեկատվություն, որը չի ապակողմնորոշի նրանց,
- Լինեմ զգոն, որպեսզի կանխեմ խարդախության բոլոր ձևերը՝ հաճախորդներին պաշտպանելու, փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, կոռուպցիայի դեմ պայքարելու համար,
- Հայցեմ, որ «Նոր պրոդուկտների և ծառայությունների հանձնաժողովը» (ՆՊԾՀ) հաստատի գործունեության բոլոր տեսակները և ցանկացած փոփոխություն շուկայում առաջարկվող պրոդուկտների ու ծառայությունների մասին՝ օրենսդրական և նորմատիվ պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու համար, մասնավորապես հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության վերաբերյալ և համոզվելու համար, որ այն համապատասխանում է հաճախորդների պահանջներին,
- հայտնեմ իմ ղեկավարին ցանկացած խնդրի կամ իրավիճակի մասին, որը կարող է հանգեցնել շահերի բախման:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Իմ անձնական շահերը կամ «Ամունդի»-ի շահերը վեր դասեմ մեր հաճախորդների շահերից,
- Հեշտացնեմ, խրախուսեմ կամ օգնեմ հաճախորդներին այն գործողություններում, որոնք միտված են օրենքներն ու կանոնակարգերը խախտելուն,
- Առաջարկեմ պրոդուկտ, որը դեռ չի թույլատրվել «ՆՊԾՀ»-ի կողմից:

2 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

«Կրեդի Ագրիկոլ» ընկերությունների խումբը մշակել է իր հաճախորդների անձնական տվյալների օգտագործման կանոնակարգը: Սույն կանոնակարգը ապահովում է տեղեկատու շրջանակ խմբի բոլոր աշխատակիցների համար, այդ թվում նրանց, ովքեր աշխատում են Ֆրանսիայում և արտասահմանում և ովքեր մշակում են այս տեսակի տվյալներ: Այն վերահաստատում է խմբի ստանձնած հանձնառությունները, ինչպես նաև լավագույն փորձը, որը պետք է պահպանվի:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ամունդի» ընկերությունը հստակ դիրքորոշում ունի զգայուն համարվող անձնական տվյալների նկատմամբ՝ պարտավորություն ստանձնելով առաջնահերթ ուշադրություն դարձնել տվյալների անվտանգությանը, օգտագործել տվյալներն իրենց հաճախորդների շահերից ելնելով, գործել էթիկապես և պատասխանատու կերպով, ինչպես նաև կիրառել թափանցիկ և կրթական մոտեցում իր հաճախորդների նկատմամբ, որպեսզի նրանք կարողանան վերահսկել իրենց տվյալները և դրանց օգտագործումը:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- SS նախագիծ սկսելիս պետք է ներգրավեմ տեղեկատվական անվտանգության գլխավոր պատասխանատուին («CISO») և տվյալների պաշտպանության պատասխանատուին («DPO»)՝ անձնական տվյալների պաշտպանության բոլոր կանոններին համապատասխանելու համար,
- Հավաստիանամ, որ նախագիծը համապատասխանում է Կանոնագրքի սկզբունքներին՝ անվտանգություն, ամբողջականություն և հուսալիություն, էթիկա, թափանցիկություն, կրթություն և այլն,
- Եթե կա կասկած, միշտ դիմեմ «CISO»-ին կամ «DPO»-ին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Օժանդակեմ անձնական տվյալների մշակում ներառող նախագծին, առանց «DPO» -ի կամ «CISO»-ի հետ նախագծի համապատասխանությունը ստուգելու,
- Մոռանամ հետևել Կանոնագրքում շարադրված հիմնական սկզբունքներին,
- Մշակեմ որևէ անձնական տվյալ չձևակերպված նպատակներով կամ առանց հաճախորդի նախնական իմացության,
- Չհամապատասխանեմ «Կրեդի Ագրիկոլ» խմբի կողմից ընդունված կանոններին և առաջարկություններին՝ անձնական տվյալների անվտանգության և գաղտնիության ապահովման համար՝ մասնավորապես չարտոնված անձանց տվյալները հասանելի դարձնելով:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Ես հավաքել եմ իմ հաճախորդների անձնական տվյալները, այնուհետև մշակման և դրանց արդյունքների մասին հայտնել եմ Տվյալների պաշտպանության և ազատությունների ազգային հանձնաժողովին (CNIL)՝ նախքան տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի («GDPR») գործողության մեջ մտնելը: Այդ ժամանակ մենք արդեն ստացել էինք «CNIL»-ի համաձայնությունը: Կարո՞ղ եմ արդյոք օգտագործել այս տվյալները:

→ 2018 թվականի մայիսին ուժի մեջ մտած նոր կարգավորման համաձայն, դուք կարող եք օգտագործել կամ մշակել անձնական տվյալներ ըստ Ձեր հայտարարագրման: Սակայն նոր կարգավորումը պահանջում է, որ ընկերությունները հաշվի առնեն, թե ինչպես են մշակվում տվյալները: Դուք պետք է համոզվեք, որ հաստատված տվյալների մշակման առանձնահատկությունները (ինչպես նկարագրված է «CNIL»-ի հայտարարության մեջ) պատշաճ կերպով մուտքագրվել են այս գրանցամատյանում: Անհրաժեշտության դեպքում դիմեք «DPO»-ին:

Ես կցանկանայի օգտագործել իմ հաճախորդների տվյալների բազան պրոդուկտի նոր մարքեթինգային արշավ սկսելու համար, բայց ես չգիտեմ, արդյոք իմ հաճախորդները տվել են իրենց համաձայնությունը, որպեսզի իրենց տվյալները կիրառվեն այդ նպատակի համար: Ես դրա իրավունքն ունե՞մ:

→ Նույնիսկ եթե այդ տվյալները արդեն պահվում են հաճախորդների տվյալների բազայում, Դուք կարող եք օգտագործել դրանք միայն այն նպատակների համար, որոնց համար դրանք հավաքագրվել են և օգտագործել դրանք միայն էլեկտրոնային փոստի միջոցով արշավների համար, եթե հաճախորդները տվել են իրենց համաձայնությունը: Համոզվեք, որ դուք ունեք ձեր հաճախորդների համաձայնությունը՝ այս եղանակով իրենց տվյալները օգտագործելու համար: Օգտագործեք «Կրեդի Ագրիկոլ Խմբի»-ի անձնական տվյալների կանոնագրքում ներկայացված լավագույն փորձը և մեկնաբանությունների ուղեցույցը: Խորհրդակցեք իրավաբանական, համապատասխանության և/կամ SS անվտանգության մեր փորձագետների հետ: Բացի այդ, ստացեք ձեր հաճախորդների ուղղակի համաձայնությունը ցանկացած տեսակի առևտրային հրավեր տրամադրելուց առաջ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Լսել եմ, որ բանակցությունների ընթացքում ոչ մի նվեր չի կարելի ընդունել: Արդյո՞ք դա ճիշտ է:

→ Իսկապես, բոլոր նվերները (նույնիսկ գովազդային բնույթի) և հրավերները պետք է մեխանիկորեն մերժվեն: Բացարձակ իմաստով դա նշանակում է, որ Դուք չպետք է ընդունեք որևէ տեսակի օգուտ, քանի որ դա կարող է խեղաթյուրել մատակարարի ընտրության Ձեր դատողությունները:

Ես կապ եմ հաստատել և հանդիպել մի ընկերության հետ, որը կատարելապես համապատասխանում է իմ ակնկալիքներին: Այն, նույնիսկ, մի քանի լրացուցիչ առաջարկներ է ներկայացրել: Ես որոշել եմ փոխանցել այդ ընկերության մասին մանրամասները «Ամունդի»-ի գնումների պատասխանատուին, որպեսզի այն ներառեն այն ընկերությունների ցանկում, որոնց հետ հարցումներ կանցկացվեն մրցույթի անցկացման շրջանակներում: Արդյո՞ք դա է ճիշտ մոտեցումը:

→ Առաջին հերթին, Դուք պետք է ամփոփեք, թե ինչի կարիք ունեք, այնուհետև մշակեք հիմնական բնութագրերը: Պոտենցիալ մատակարարը չի կարող կատարելապես համապատասխանել տրված ցանկին, քանի որ հակված կլինի առաջարկելու իր լուծումները, գործիքները կամ ծառայությունները, որոնք հնարավոր է նույնությամբ չհամապատասխանեն Ձեր կարիքներին:

→ Գնումների պատասխանատուի օգնությամբ պետք է կազմել այն ընկերությունների ցանկը, որոնց շրջանակներում կիրականցվեն հարցումներ. գործընթացը պետք է կազմակերպվի գնումների պատասխանատուի աջակցությամբ (այդ թվում նաև հարցումներին հաջորդող փուլերը), որպեսզի գտնեք այն մատակարարին, որ լավագույնս կհամապատասխանի Ձեր կարիքներին:

3 ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՐԴԱՐ ԵՎ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մատակարարի արդար և անկողմնակալ ընտրությունը, նախևառաջ, ենթադրում է մրցութային առաջարկների մշակման փուլում բոլոր ծառայություն մատուցողների համար միևնույն նախապայմանների ապահովումը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Մատակարարի անաչառ ընտրությունը պետք է կատարել՝ հիմնվելով մրցույթի մասնակից ընկերությունների միջև արդար մրցակցության ընթացքում գրանցած արդյունքների վրա: Այս ընտրությունը պետք է հիմնված լինի օբյեկտիվ տեղեկատվության վրա, որը ներառում է նաև սոցիալական և բնապահպանական պատասխանատվությունը՝ ի հավելումն այլ առևտրային և պայմանագրային չափանիշների:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Որպեսզի ընտրությունը լինի անաչառ, բոլոր ընկերությունները պետք է արժանանան միևնույն վերաբերմունքին գնորդների, որոշում կայացնողների և/կամ «Ամունդի»-ի որևէ այլ համապատասխան աշխատակցի կողմից, իսկ ընտրությունը պետք է հիմնված լինի օբյեկտիվ տեղեկատվության վրա:

Վերաշարադրվածը ներառում է մրցույթի իրականացման ողջ ընթացքում գնորդների, որոշում կայացնողների և/կամ «Ամունդի»-ի որևէ այլ աշխատակցի պատասխանատու և արդար վերաբերմունքը մրցակցող ընկերությունների նկատմամբ: Հետևաբար, զուտ անհատական շահերը չպետք է հաշվի առնվեն հաղթող մասնակցի ընտրության ժամանակ:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Բարեխղճորեն պատրաստեմ այն ընկերությունների ցանկը, որոնք պետք է ստանան մրցույթի մասնակցության հրավեր՝ նրանց տեղեկացվածության և ռեսուրսների համադրելի մակարդակի ապահովման համար (հաշվի առնելով ՓՄՁ-ների հնարաավորությունները՝ նույն մրցույթի մասնակից հանդիսացող խոշոր ընկերությունների խմբերի համեմատ),
- Զեկուցեմ ցանկացած շահերի բախման արդյունքում առաջացող պոտենցիալ ռիսկի մասին (օրինակ՝ մրցույթին մասնակցող կազմակերպություններից մեկում աշխատող ընտանիքի անդամի առկայության վերաբերյալ, և այլն),
- Համոզվեմ, որ արձագանքած բոլոր կազմակերպությունները բավարար պատասխան են ստացել և միևնույն ժամանակահատվածում: Այս նպատակով մրցութային փաստաթղթերը պետք է ուղարկվեն միայն և միայն մրցույթում ներգրավված բոլոր ընկերությունների նույնականացումից հետո և այդ ցուցակում ավելացումներ չկատարվեն մրցույթի մեկնարկը հայտարարելուց հետո,
- Հավաստիանամ, որ մրցույթի բոլոր մասնակիցները միաժամանակ են ստացել նույն ելքային և ցանկացած փոփոխված տեղեկատվությունը, տվյալները և փաստաթղթային նյութերը (մրցույթի մասնակցության պայմանները, տեխնիկական պայմանները, տեխնիկական և գործառնական բնութագրերը, պայմանագրային պարտավորությունները, և այլն),
- Հանդիպումների ժամանակ ապահովեմ բոլոր մրցակցող ընկերությունների մասնակցությունը նման մեկ կամ մի քանի ընդունելություններին: Յուրաքանչյուր մասնակցի համար պետք է ապահովել հանդիպման միևնույն տևողությունը:
- Ընտրության առաջին փուլի ավարտից և նախապատվություն ստացած մասնակիցների ընտրությունից հետո, հաջորդ փուլ չանցած մասնակիցներին հայտնեմ նրանց մրցույթից դուրս մնալու պատճառների մասին,
- Պահպանեմ և ապահովեմ քննարկումների և որոշումների գաղտնիությունը, որոնք հասանել են որոշում կայացնողներին և գնումների պատասխանատուին մրցույթի իրականացման գործընթացի բոլոր փուլերում:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Մրցույթի անցկացման ժամանակ տեղեկատվություն տրամադրեմ միայն ընտրանքային մասնակիցներին,
- Որևէ մասնակցի հուշեմ այլ հայտերի բովանդակության կամ մրցույթում ներառված այլ ընկերությունների ներգրավվածության մակարդակի մասին,
- Իրականացնեմ ընտրության և/կամ դասակարգման չափանիշների փոփոխություն առաջարկների ստացման ամսաթվից հետո,
- Ընդունեմ որևէ հրավեր, նվեր կամ արտոնություն մրցույթի մասնակից մեկ կամ մի քանի կազմակերպություններից՝ մրցույթի անցկացման կամ պայմանագրային բանակցությունների ընթացքում:

4 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Խելամիտ պատշաճ ուսումնասիրությունն անհրաժեշտ է գնման գործընթացի բոլոր մասնակիցների վարքը սահմանված հանձնառությունների և սկզբունքների հետ համահունչ դարձնելու համար, մասնավորապես, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները հարգելու, աշխատավայրի կարգավորումներին համապատասխանելու, բոլոր տեսակի խտրականությունների դեմ պայքարելու, բազմազանությունը խթանելու և բնապահպանական ու գործարար էթիկան պահպանելու հետ կապված: Մատակարարման շղթայի մաս կազմող որևէ օղակի կողմից այս հանձնառություններին և սկզբունքներին հետամուտ լինելու խախտումը կարող է լրջորեն վնասել «Ամունդի»-ի գործունեությանը, հեղինակությանն ու բարի համբավին:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Ամունդի»-ի հանձնառությունն ու սկզբունքները համապատասխանում են «Կրեդի Ագրիկոլ Խմբի» հանձնառությանն ու սկզբունքներին: Դրանք, մասնավորապես, ներառում են.

- ֆինանսական հավասարությունը. մատակարարների վարձատրությունը՝ համաձայն կիրառելի օրենքների և կարգավորումների,
- հավասար վերաբերմունքը,
- մեր ընթացակարգերի թափանցիկություն,
- կայուն հարաբերությունների խրախուսումը,
- մատակարարներին հայտնի կանոնակարգերին հետևելով՝ կոռուպցիայի կանխարգելումը,
- ապրանքի կամ ծառայության մատակարարման ամբողջ ընթացքում առաջացած ծախսերի համապարփակ ծախսային վերլուծության իրականացումը,
- սոցիալական և բնապահպանական գործունեության կատարողականի ինտեգրումը մատակարարի ընտրության չափանիշներում,
- Մարզերի զարգացման խթանումը՝ համապատասխան տեղական մատակարարների ընտրությամբ:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Մատակարարների հետ համագործակցության մեջ լինեմ ազնիվ վստահելի կապերի հաստատման համար՝ անկախ այն հանգամանքից, թե համագործակցությունը միանգամյա, թե երկարաժամկետ բնույթ է կրում,
- Ներգրավեմ այնպիսի գնորդի, ով համապատասխան պաշտոն է զբաղեցնում ամբողջ գնման գործընթացը երաշխավորելու և ռիսկերը կառավարելու համար, մասնավորապես, իրավական, ֆինանսական և գործառնական մակարդակներում,
- Մրցույթի արդյունքում չընտրվելու, ինչպես նաև այդ որոշումը հիմնավորող անաչառ չափանիշների վերաբերյալ մրցույթի մասնակից կազմակերպություններին տեղեկատվություն տրամադրելու գործառույթը թողնեմ գնորդին,
- Համեմատեմ հարցումներն անցած մատակարարների ներկայացրած առաջարկները՝ ըստ ընտրության բոլոր չափանիշների, ընդհանուր ծախսերի հաշվառման եղանակով,
- Մատակարարին փոխելիս խելամիտ ժամանակահատվածում ծանուցեմ նախորդ մատակարարին՝ գործողությունները դադարեցնելու իրագործելի և ընդունելի ժամկետներ տրամադրելու համար:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- «Ամունդի»-ի անունից ծախսեր ներկայացնեմ մատակարարին՝ առանց դրա կատարման համար պաշտոնական թույլտվություն ստանալու (տե՛ս լիազորությունների պատվիրակումը),
- Մատակարարի հետ բանակցությունների ժամանակ բացահայտեմ «Ամունդի»-ի ռազմավարությանն առնչվող կամ որևէ այլ զգայուն տեղեկատվություն, որը հանրամատչելի չէր լինի այլ հավասար պայմաններում,
- Ձերծ մնամ ընտրության գործընթացի ընթացքում մատակարարի ֆինանսական առողջության վերաբերյալ նախնական վերլուծության իրականացումից կամ անտեսեմ յան չափանիշները, որոնք կարող էին հանգեցնել այն եզրահանգման, որ մատակարարը կդառնա տնտեսապես կախյալ «Ամունդի»-ի հետ իր գործարար հարաբերությունների սկզբում և ամբողջ ընթացքում,
- Հաստատեմ ծառայությունների ստացումն առանց մատակարարի հաշիվ-ապրանքագրի ստացմանը ու վճարմանը հետևելու և, հատկապես, առանց կարգավորումների համաձայն վերջնաժամկետներում վճարումների կատարման համապատասխանության ստուգման,
- Դադարեցնեմ պայմանագիրն առանց բավարար նախազգուշացման, որը մատակարարին թույլ կտա վերակազմակերպել իր բիզնեսը:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Ուզում եմ սկսել ուղարկել մրցույթին մասնակցության հրավերները և հինգ օր ունեմ մատակարարի ընտրության համար: Արդյո՞ք դա հնարավոր է:

→ Մատակարարներին անհրաժեշտ է նվազագույն ժամանակ արձագանքելու համար: Այն նրանց անհրաժեշտ է համապատասխան և ամբողջական առաջարկ պատրաստելու համար:

Ես ուզում եմ աշխատել այնպիսի մատակարարի հետ, որն ինձ լիովին գոհացնում է: Ես աշխատում եմ այդ մատակարարի հետ արդեն 10 տարի, և նրա գրեթե ողջ եկամուտը ապահովում է «Ամունդի»-ն: Արդյո՞ք այստեղ կա ռիսկ:

→ Այս ռիսկը գնահատելու համար գնման պատասխանատուն պետք է վերլուծի մատակարարի ֆինանսական վիճակը և ծառայություններ մատուցողի տնտեսական կախվածության աստիճանը, առաջարկի այլընտրանքային լուծումներ, եթե կախվածության մակարդակը գերազանցում է 25%-ը: Ծառայության մատուցման կտրուկ դադարեցման դեպքում ծագած ռիսկը կարող է լինել ֆինանսական, գործառնական կամ իրավաբանական:

Ես ուզում եմ փոխարինել մատակարարին և դադարեցնել նրա հետ կնքած պայմանագիրը՝ մինչև դրա ժամկետի ավարտը:

→ Գնման պատասխանատուն պետք է նշի մատակարարի ծանուցման ժամկետը, որը պետք է պահպանվի, և կախված մատակարարի կախվածության մակարդակից, ինչպես նաև «Ամունդի»-ի հետ նրա գործարար հարաբերությունների տևողությունից, առաջարկի համագործակցության դադարեցման պայմանները, որոնք թույլ կտան ծառայություն մատուցողին պահպանել իր ֆինանսական կայունությունը մինչև իր բիզնեսի վերակազմակերպումն ապահովելը:

5 ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Երբեմն ես ստիպված եմ «Ամունդի»-ի անունից մասնակցել մասնագիտական ասոցիացիայի հանդիպումներին կամ քննարկումներին: Ի՞նչ թեմաներ ես իրավունք ունեմ քննարկել և ի՞նչ na[aդրույթներ պետք է ընդունեմ:

→Դուք կարող եք քննարկել տարբեր թեմաներ և համակարգել որոշակի գործողություններ մրցակիցների հետ, պայմանով, որ դրանք չեն վերաբերում զգայուն հարցերի:

→ Հիշեք, որ ժողովին մասնակցությունը (նույնիսկ պասիվ), որտեղ թեման կարող է որակվել որպես հակամրցակցային, կարող է դիտվել որպես անդամակցություն կարտելի: Նախքան նման հանդիպումների հաճախելը, համոզվեք, որ առկա է օրակարգ:

Մրցույթների կանոնները չպահպանելու դեպքում հեռացեք ժողովից և խնդրեք, որ Ձեր մեկնումը նշվի արձանագրության մեջ: Մի հապաղեք օգնության համար դիմել իրավաբանական բաժին՝ պարզելու, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ունենալ նման հանդիպումներից առաջ, դրանց ընթացքում և դրանցից հետո:

Ես ներկայացնում եմ «Ամունդի»-ն, որը ցանկանում է համատեղ ներդրում կատարել բանկային կամ ներդրումային փաթեթում: Ի՞նչ նախազգուշական միջոցներ պետք է ձեռնարկեմ:

→ Նման համատեղ ներդրումային փաթեթին միանալը պետք է հիմնավորված լինի գործարքի բնույթով և օբյեկտիվ պատճառներով, հատկապես ռիսկերի բաշխման տեսանկյունից: Օպերատորների միջև համակարգումը պետք է խիստ սահմանափակվի այն նպատակով, որի համար ստեղծվել է ներդրումային փաթեթը: Հավաստիանալ, որ համակարգման գործունեությունը երբեք չի շեղվել նախապես սահմանված գործարքից, և որ դա ամրագրվել է հանդիպումների արձանագրություններում:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մրցակցության մասին օրենքը բաղկացած է մի շարք կանոններից, որոնք կիրառելի են ինչպես մասնավոր, այնպես էլ տարբեր շուկաներում գործող պետական ձեռնարկությունների դեպքում: Դրա նպատակն է պահպանել ազատ և արդար մրցակցության սկզբունքը և ապահովել սպառողների իրավունքների պաշտպանությունը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Վարքագծի բազմաթիվ դրսևորումներ, ինչպիսիք են կարտելները և գերիշխող դիրքի չարաշահումը, կարող են վտանգել ազատ մրցակցությունը:

Կարտելը համաձայնագիր է, համաձայնեցված վարքագիծ կամ պլանավորված և կանխամտածված համագործակցություն ընկերությունների միջև, որի նպատակը կամ հետևանքը՝ նույնիսկ պոտենցիալ, մրցակցության սահմանափակման նպատակով նրանց վարքագծի համակարգումն է: Ընկերության հետ համաձայնությունը, լինի դա մրցակից, թե ոչ, կարող է ունենալ բանավոր, գրավոր, պաշտոնական կամ ոչ պաշտոնական համաձայնության ձև (գործարար ճաշի, առևտրային ասոցիացիայի միջոցառման ընթացքում և այլն):

Ի լրումն կարտելային համաձայնագրերի ամենալուրջ ձևերի (ինչպիսիք են վաճառքի գների կամ առևտրային պայմանների համատեղ որոշումը), հաճախորդների կամ շուկաների բաժանումը, մրցույթների համակարգումը կամ կոնկրետ հաճախորդին կամ մատակարարին բոյկոտելու որոշումը նույնպես իրենցից ներկայացնում են կարտել:

Գերիշխող դիրքի չարաշահումը վերաբերում է այն ընկերություններին, որոնք կարող են գործել համաձայնեցված՝ տվյալ շուկայում մրցակիցների դուրս մղմանն ուղղված գնային քաղաքականություն վարելով, գույքի առուվաճառքի ռազմավարությունների, խտրական պրակտիկայի միջոցով և այլն:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Ամունդի»-ի ողջ գործունեությունը պետք է իրականացվի մրցակցության մասին օրենսդրության համաձայն, ընդ որում հիմնարար սկզբունքն այն է, որ շուկայում գործող ընկերությունները պետք է ինքնուրույն որոշեն իրենց ռազմավարությունը: Ուստի, անկախ ընկերությունների միջև պայմանավորվածությունները և գերիշխող դիրքի չարաշահումները խստիվ արգելված են:

Զգայուն տեղեկատվությունը պարունակում է ոչ հրապարակային տվյալներ, որոնք կարող են օգտակար լինել ռազմավարական առումով, ինչպիսիք են գնային և շուկայի կամ ընկերության միտումների վերաբերյալ տեղեկատվությունը, հաճախորդների ցանկը, շուկայի հնարավորությունները և տեղաբաշխման մեթոդները, ռազմավարությունը, ծախսերը և այլն: Այնուամենայնիվ, որոշ տեղեկություններ կարող են փոխանցվել «Ամունդի»-ի մրցակիցներին այն բանից հետո, երբ այդ տեղեկատվությունը դարձել է հրապարակային, եթե այն վերաբերում է մասնագիտական առումով ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմայի, կամ եթե այն գտնվում է առևտրային ասոցացիաների տիրույթում: Այս դեպքում տեղեկատվությունը պետք է համախմբվի և չի կարող առանձնացվել (վիճակագրություն և այլն):

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Խուսափեմ «Կրեդի Ագրիկոլ» խմբից դուրս երրորդ կողմի հետ հաղորդակցվելիս զգայուն հարցերի քննարկումից անկախ բնույթից,
- Եթե նման թեմաներ են ծագում, դադարեցնեմ խոսակցությունը և անմիջապես տեղեկացրեմ այդ մասին իմ ղեկավարին և իրավաբանական բաժնին,
- Եթե կասկածներ ունեմ տեղեկատվության գաղտնիության աստիճանի առնչությամբ, խորհրդակցեմ ընկերության իրավական պատասխանատուի հետ՝ նախքան մրցակցի կամ առևտրային ասոցիացիայի հետ բանակցություններ նախաձեռնելը,
- Մրցակիցների հետ պաշտոնական և անհրաժեշտ հարաբերությունների համատեքստում հստակ նշեմ մտքերի փոխանակման նպատակը, սահմանափակվեմ միայն այդ նպատակի շուրջ քննարկմամբ և վարեմ գրավոր արձանագրություն,
- Նախքան որևէ համաձայնագրի կնքումը, որը կարող է զգալի մրցակցային ազդեցություն ունենալ համապատասխան շուկայի վրա, դիմեմ իրավաբանական բաժին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Խորհրդակցեմ որևէ մրցակցի հետ կամ փոխանակեմ նրա հետ ծառայությունների գների կամ հաճախորդների առաջարկվող գների վերաբերյալ տեղեկատվություն,
- Կնքեմ որևէ համաձայնագիր մրցակիցների հետ՝ հաճախորդի, տարածքի կամ շուկայի բաժանման վերաբերյալ,
- Բոյկոտեմ որոշակի հաճախորդների կամ մատակարարների,
- Բանակցեմ այնպիսի դրույթների շուրջ, որոնք սահմանափակում են առևտրային գործընկերների առևտրային ազատությունն՝ առանց իրավաբանական բաժնի հետ խորհրդակցելու:

ՄԵՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

6. Աշխատակիցների տվյալների պաշտպանություն

7. Առողջությունն ու անվտանգությունն աշխատավայրում

8. Խտրականության բացառում

9. Բազմազանություն և գենդերային հավասարություն

10. Պայքար ոտնձգությունների դեմ

11. Զբաղվածությունը մասնագիտական գործունեությունից դուրս

12. Բնապահպանական ռազմավարություն

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Որպես իմ՝ մարդկային ռեսուրսների կառավարչի պարտականությունների մաս, լիազորություններիս շրջանակում հասանելիություն ունեմ աշխատողների անձնական տվյալներին: Ես բավարար ժամանակ չունեի ավարտելու իմ աշխատանքը, ուստի ես պատճենահանեցի դրա մի մասն իմ «USB» կրիչի վրա, որպեսզի կարողանամ տանը շարունակել: Ցավոք, տուն վերադառնալիս գնացքում կորցրել եմ կրիչս: Արդյո՞ք անհրաժեշտ է ինչ-որ մեկին հայտնել այդ մասին :

→ Դուք պետք է այդ մասին տեղեկացնեք ձեր ղեկավարին եւ «Ամունդի»-ի («CISO») տեղեկատվական անվտանգության գլխավոր աշխատակցին, որն էլ իր հերթին կտեղեկացնի տվյալների պաշտպանության պատասխանատուին («DPO»): Այս կրիչի կորուստը կարող է լուրջ հետևանքներ ունենալ և զգալի վնաս հասցնել ինչպես Ընկերությանը, այնպես էլ աշխատակիցներին:

→ Երբեք մի՛ պատճենեք որևէ անձնական տվյալ ոչ արտաքին սարքի, ոչ էլ Ձեր համակարգչի մեջ: Խիստ անհրաժեշտության պարագայում օգտագործեք միայն «Ամունդի»-ի կողմից տրամադրված անվտանգ հիշողության կրիչները և գաղտնաբառով պաշտպանե՛ք Ձեր համակարգչում պահվող ֆայլերը, եթե տվյալները կոդավորված չեն: Անձնական տվյալների անվտանգությունն ապահովելու նպատակով շատ կարևոր է պահպանել ներքին կանոնակարգերն ու ընթացակարգերը:

6 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք: Անձնական տվյալները կարող են հավաքագրվել, մշակվել և պահպանվել միայն սահմանված և օրինական նպատակներով: Այս տեղեկատվությունը պետք է ներկայացվի բոլոր աշխատակիցների ուշադրությանը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Տվյալների օգտագործումը խստորեն վերահսկվում է:

- Պետք է մշակվեն միայն այն տվյալները, որոնք էական են և անհրաժեշտ թիրախավորված նպատակների իրագործման համար, իսկ վերջիններս պետք է նախապես հստակ սահմանված լինեն
- Անձնական տվյալները չպետք է պահպանվեն անսահմանափակ ժամկետով;
- Անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկվեն տվյալների գաղտնիության ապահովման և դրանց՝ չլիազորված երրորդ անձանց փոխանցումից խուսափելու համար;
- Յուրաքանչյուր ոք պետք է տեղեկացված լինի իր անձնական տվյալների մշակման մասին: Ինչպես նաև պետք է հասանելիության ու իր վերաբերյալ ողջ տեղեկատվությունը փոխելու իրավունք ունենա: Եվ, ի վերջո, կարող է ընդդիմանալ դրանց մշակմանը օրինական հիմնավորումներով:

Անձնական տվյալների ոչնչացումը, կորուստը, խեղաթյուրումը, բացահայտումը կամ չլիազորված հասանելիությունը կարող է խախտել անհատների իրավունքները, ինչպես նաև աշխատակիցների անհատական և կոլեկտիվ ազատությունները: Հետևաբար, ներքին կանոնակարգերն ու ընթացակարգերը պետք է խստորեն պահպանվեն:

«ԱՄՈՒՆԴԻ»-ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուրի կողմից իր անձնական տվյալների ոչ թղթային եղանակով փոխանցման համատեքստում, «Կրեդիտ Ագրիկոլ Խումբը» մշակել է կանոնակարգ՝ հիմնված հետևյալ հինգ սկզբունքների վրա. ամբողջականություն և հուսալիություն, էթիկա, թափանցիկություն և ուսուցում, անվտանգություն և հաճախորդների վերահսկողություն իրենց տվյալների օգտագործման նկատմամբ: Այս կանոնակարգն ուղեցույց է հանդիսանում Խմբի բոլոր աշխատակիցների համար, այդ թվում՝ «Ամունդի»-ի աշխատակիցների՝ ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Որպես գործատու՝ «Ամունդին» մշակել է հատուկ Կանոնակարգ աշխատակիցների համար, որը երաշխավորում է նրանց անձնական տվյալների պաշտպանությունը և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Ապահովեմ հավաքագրված տեղեկատվության համապատասխանությունը եւ արդիականությունը,
- Ապահովեմ աշխատակիցների տվյալների մշակման օրինականությունը, ամբողջականությունը և թափանցիկությունը,
- Անհրաժեշտության դեպքում համոզվեմ, որ անձնական տվյալների օգտագործման եղանակը պահպանվել է անձնական տվյալների մշակման ռեգիստրում,
- Տեղեկացնեմ աշխատակիցներին, թե ինչպես են օգտագործվում իրենց կողմից տրամադրված անձնական տվյալները,
- Երաշխավորեմ աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, մասնավորապես, չփոխանցելով նրանց վերաբերյալ տեղեկատվությունը չլիազորված անձանց և ապահովելով անձնական տվյալների անվտանգ պահպանությունը,
- Պահանջեմ, որ բոլոր սխալ կամ թերի տվյալները լրացվեն կամ հեռացվեն,
- Ենթակապալառուի հետ համագործակցության պարագայում համոզվեմ, որ ծառայություն մատուցողները պահպանում են այս նույն սկզբունքները:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Հավաքեմ անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ չեն հստակեցված և նպատակային օգտագործման համար,
- Փոխանցել անձնական տվյալները որևէ չլիազորված երրորդ անձի՝ Ընկերության ներսում կամ դրանից դուրս, առանց տվյալ անձի հստակ համաձայնության,
- Պահպանեմ անձնական տվյալները՝ առանց որևէ թույլտվության,
- Նախատեսված ժամանակահատվածից երկար պահպանեմ անձնական տվյալները:
- Տվյալները պատճենեմ որևէ անհուսալի կրիչի միջոցով և դուրս բերեմ Ընկերությունից:

7 ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ընկերությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն իրենց աշխատակիցների անվտանգության ապահովման և ֆիզիկական ու հոգեկան առողջության պաշտպանության համար: Այդ միջոցառումները մասնավորապես ներառում են մասնագիտական ռիսկերի կանխարգելման ռազմավարության ներդրումը, ինչպես նաև տեղեկատվական արշավների և վերապատրաստման դասընթացների անցկացումը:

«ԱՄՈՒՆԴԻ»-ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ոք, ով աշխատում է «Ամունդի»-ում կամ Ընկերության հետ, պետք է կարողանա դա անել անվտանգ, համագործակցային և հարգալից աշխատանքային միջավայրում: «Ամունդին» ջանում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները իր աշխատակիցների ֆիզիկական և հոգեկան առողջության պաշտպանության և անվտանգության ապահովման համար:

Այնուամենայնիվ, աշխատավայրում անվտանգությունը կախված է նաև մեզանից յուրաքանչյուրից: Ընկերության բոլոր աշխատակիցները՝ իրենց պատրաստվածության և հնարավորություններին համապատասխան, պետք է հոգ տանեն սեփական, ինչպես նաև իրենց գործողությունների կամ անգործության արդյունքում տուժած մարդկանց ավտանգության և առողջության մասին:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Ծանոթանամ և հետևեմ Ամունդի-ի առողջության և անվտանգության կանոններին,
- Համոզվեմ, որ իմ գործողությունները և վարքագիծը չեն ներկայացնում որեւէ ռիսկ իմ կամ այլ մարդկանց համար,
- Նպաստեմ ապահովությանն ու անվտանգությանն աշխատավայրում: Սա մասնավորապես ներառում է ընկերության կողմից կազմակերպվող անվտանգության ապահովման վարժանքներին և ուսումնական ծրագրերին մասնակցությունը, ինչպես նաև Մարդկային Ռեսուրսների բաժնին իրազեկումը ցանկացած իրավիճակի մասին, որը կարող է վտանգ ներկայացնել աշխատավայրում անվտանգության և աշխատանքի ապահովության համար:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

Անտեսեմ «Ամունդի»-ի կանոններն աշխատավայրում առողջության և անվտանգության վերաբերյալ,

Անտեսեմ որևէ իրավիճակ, որը կարող է վտանգի տակ դնել մեր աշխատանքային միջավայրի առոջությունը և անվտանգությունը:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Իմ գործընկերոջ վարքագծում փոփոխություն եմ նկատել. նա շատ լարված է թվում, մեկուսանում է, որոշ ժամանակ միայնակ է ճաշում և հրաժարվում է ինչ-որ բան քննարկելուց: Դա անհանգստացնում է ինձ, բայց ես չգիտեմ, թե ինչ կարող եմ անել այս իրավիճակում:

➞ Այս իրավիճակը մտահոգում է Ձեզ: Շատ կարևոր է կիսվել ունեցած տեղեկատվությամբ Ձեր ղեկավարի, մարդկային ռեսուրսների բաժնի կամ աշխատանքային առողջության պաշտպանության վարչության հետ, որպեսզի նրանք կարողանան արագ միջամտել ի օգուտ տվյալ անձի՝ ելնելով նրա իսկ շահերից: համապատասխան:

Վերջին հակահրդեհային անվտանգության ուսումնական մարզման ժամանակ հասկացա, որ իմ ստորաբաժանման տարհանման համար պատասխանատու երկու անձինք էլ բացակայում են, գործընկերներից մեկը չգիտեր, թե ինչ պետք է անել: Արդյո՞ք պետք է ինչ-որ մեկին տեղեկացնել այդ մասին:

➞ Ուսումնական մարզման ընթացքում Դուք նկատում եք համապատասխան ընթացակարգի խախտում, որը կարող էր վտանգել գործընկերոջ անվտանգությունը: Դուք պետք է գրավոր ծանուցեք անվտանգության համար պատասխանատու աշխատակցին, որպեսզի նա կարողանա շտկել իրավիճակը և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել բոլոր անձանց անվտանգությունն ապահովելու համար:

8 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Մարդկային ռեսուրսների բաժինը ցանկանում է, որ ես հաշմանդամություն ունեցող անձին ընդգրկեմ իմ թիմում: Արդյո՞ք կարող եմ հաշմանդամության խնդիրը քննարկել հարցազրույցի ժամանակ:

→ Այս կամ այն անձի հաշմանդամության ծագման ու բնույթին առնչվող հարցերը չեն կարող քննարկման առարկա հանդիսանալ, քանի որ այդ տեղեկատվությունը պաշտպանված է անձի բժշկական գաղտնիության իրավունքով: Սակայն, եթե թեկնածուներն իրենք են ցանկանում խոսել իրենց անձնական կարգավիճակի մասին, հարցերը պետք է կենտրոնացած լինեն միայն այն տարրերի վրա, որոնք անմիջական ազդեցություն կունենան իրենց մասնագիտական գործունեության կատարողականի վրա:

Լսեցի, թե ինչպես գործընկերներիցս մեկը մյուսի հետ խոսեց՝ օգտագործելով ռասիստական արտահայտություններ: Ի՞նչ է ինձնից պահանջվում անել:

→ Ցանկության պարագայում կարող եք անմիջապես դիմել հենց Ձեր գործընկերոջը, բայց, այնուամենայնիվ, դուք պետք է տեղեկացնեք նաև ձեր ղեկավարին և/կամ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին: Գուցե ավելի հեշտ է անտեսել, բայց մենք բոլորս պատասխանատու ենք հարգալից և համագործակցային աշխատանքային միջավայրի ստեղծման և պահպանման համար:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Խտրականությունը որևէ մեկի նկատմամբ նվազ բարենպաստ վերաբերմունք ցուցաբերելն է՝ հիմնված որոշակի չափանիշների և բնութագրերի վրա, մասնավորապես:

- Տարիքը,
- որոշակի էթնիկ խմբի կամ ենթադրյալ ռասայի պատկանելությունը, ազգությունը,
- ընտանեկան կարգավիճակը կամ հղիությունը,
- գենդերային պատկանելիությունը,
- գենետիկ բնութագրերը,
- հաշմանդամությունը, ինքնուրույնության սահմանափակումը,
- առողջական վիճակը,
- ազգանունը, անունը,
- ծագումը,
- ֆիզիկական տեսքը,
- բնակության վայրը,
- քաղաքական հայացքները,
- կրոնը,
- սեռական կողմնորոշումը կամ սովորույթները,
- արհմիութենական գործունեությունը կամ հայացքները,
- խոցելիությունը՝ պայմանավորված իր սոցիալ-տնտեսական կարգավիճակով, կամ
- ցանկացած այլ ընկալելի տարբերություն:

Խտրականությունը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի: Ուղղակի խտրականությունը ենթադրում է ցանկացած գործողություն, որը հանգեցնում է աշխատանքի ընդունման, մասնագիտական ուսումնառության, առաջխաղացման կամ աշխատանքային կյանքի ցանկացած այլ ասպեկտներին առնչվող անարդար վերաբերմունքի:

Անուղղակի խտրականությունը ենթադրում է ցանկացած գործողություն, որի հետևանքով, չնայած թվացյալ չեզոքությանը, այլ անձանց համեմատ տվյալ անձը հայտնվում է նվազ բարենպաստ կարգավիճակում իր սեռի, տարիքի, հաշմանդամության կամ այլ առանձնահատկությունների պատճառով:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Ամունդին» բազմազանությունը խթանող ընկերություն է, որի գնահատմամբ ինտեգրման ապահովումը, տաղանդների բացահայտումը և բոլոր աշխատակիցների բազմազանության խթանումը Ընկերության զարգացման հիմքում ընկած հիմնական շարժիչ ուժն են: Այս համոզմունքը և հավասար հնարավորությունների սկզբունքի պահպանումը այն հիմնասյուներն են, որոնք ընկած են մեր մարդկային ռեսուրսների կառավարման բոլոր գործողությունների հիմքում: «Ամունդին» գտնում է, որ խտրական վարքագծի բոլոր ձևերն անընդունելի են և մարդկանց զրկում են իրենց նկատմամբ պատշաճ հարգանքից: Կարծրատիպերի դեմ պայքարելու և կողմնակալ որոշումների կայացումը բացառելու համար «Ամունդին» ջանքեր է գործադրում բարձրացնելու իր տնօրենների, ղեկավարների և աշխատակիցների իրազեկվածությունը խտրականության բացառման մարտահրավերների վերաբերյալ:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Մերժեմ խտրականության բոլոր ձևերն ուղղված աշխատակիցների, հաճախորդների, մատակարարների, ծառայություն մատուցողների և այլ անձանց նկատմամբ, որոնք «Ամունդի»-ի հետ գործարար հարաբերությունների մեջ են,
- Չընդունեմ որևէ վարքագիծ, որը կարող է ենթադրել խտրականություն աշխատակիցների, մատակարարների, հաճախորդների և այլոց նկատմամբ,
- Զրուցեմ խտրականության ենթարկված անձանց հետ և աջակցություն ցուցաբերեմ, և անհրաժեշտության պարագայում, տեղեկացնեմ ղեկավարին կամ մարդկային ռեսուրսների բաժնին,
- Եթե ես ղեկավար եմ, պետք է որոշումներս հիմնավորեմ օբյեկտիվ չափանիշներով և չունենամ որևէ նախապաշարմունք:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Մասնակցություն ունենամ խտրականության արտահայտման որևէ իրավիճակում,
- Նպաստեմ խտրականություն առաջացնող թշնամական միջավայրի ձևավորմանը:

9 ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ընկերության կորպորատիվ բազմազանության քաղաքականությունը հիմնված է սկզբունքների և գործողությունների այնպիսի համալիրի վրա, որը, պրոակտիվ մոտեցման միջոցով, ուղղված է տարբեր դրսևորումների զարգացմանն ու առաջխաղացմանը:

Կախված գործող ազգային կանոնակարգերից, ընկերություններից կարող է պահանջվել համապատասխանել այնպիսի պարտավորությունների, ինչպիսիք են գենդերային հավասարությունը կամ հաշմանդամների զբաղվածությունը:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Ամունդի»-ն հավատում է, որ ինտեգրման ապահովումը, տաղանդների բացահայտումը և բոլոր աշխատակիցների բազմազանության խթանումը ընկերության զարգացման հիմքում ընկած հիմնական շարժիչ ուժն է: Գենդերային բազմազանության խրախուսումը բաց և պատասխանատու կորպորատիվ մշակույթի ստեղծումն է, որը նպաստում է ներքին համախմբվածությանն ու առաջընթացին: Այս հանձնառությունն արտացոլվում է կոնկրետ գործողությունների մեջ, ինչպիսիք են կանանց և տղամարդկանց վարձատրության միջև տարբերությունը չափելու համար կատարված հետազոտությունները, աշխատողների փոխհատուցումը, աշխատավարձերի չարդարացված տարբերությունները կրճատելու համար աշխատողների փոխհատուցումը և հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխատանքի ընդունումը:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Կառավարման բոլոր որոշումներում կատարեմ օբյեկտիվ դատողություններ, որոնք հիմնված են հմտությունների վրա,
- Լսեմ տարբեր կարծիքներ՝ օբյեկտիվություն ապահովելու համար,
- Նպաստեմ բազմազանությանն իմ թիմերում:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Որոշում կայացնեմ հիմնվելով ոչ օբյեկտիվ չափանիշների վրա,
- Իրականացնեմ գործողություններ, որոնք կարող են հանգեցնել անհավասար վերաբերմունքի կամ նույնիսկ խտրականության:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Իմ թիմում աշխատակիցների մեծ մասը տղամարդիկ են: Իմ աշխատակիցներից մեկը մի քանի շաբաթից թոշակի կանցնի, և ես մտածում եմ նրան փոխարինել թիմի այլ անդամով: Արդյո՞ք ես կարող եմ հակված լինել այդ պաշտոնում կին աշխատակցի առաջխաղացմանը:

→ Առաջին հերթին, Ձեր դատողությունը հիմնեք Ձեր թիմի յուրաքանչյուր անդամի հմտությունների վրա և ընտրեք այն անձին, ով լավագույնս համապատասխանում է իր պարտականությունների կատարմանը:

Իմ թիմում թափուր պաշտոնի համար մի քանի հայտ եմ ստացել: Հարցազրույցներից պարզ է դարձել, որ պաշտոնին լավագույնս համապատասխանում է մի մարդ, ով հաշմանդամություն ունի: Ինչպե՞ս կարձագանքի իմ թիմը:

→ Կարևոր է հիշել, որ մարդու հմտությունները միակ գործոնն է, որը պետք է հաշվի առնել անձնակազմի ընտրության ժամանակ: Որպես ղեկավար, Եթե Դուք որևէ մտահոգություն ունեք այս նոր աշխատակցի՝ Ձեր թիմում հաջող ինտեգրման վերաբերյալ, մի հապաղեք խորհրդակցել մարդկային ռեսուրսների բաժնի համապատասխան աշխատակցի հետ: Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել գործողություններ, որոնք ուղղված են Ձեր թիմում նոր աշխատակցի լավագույնս ինտեգրմանը:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Գործընկերներից մեկը ահաբեկում և սիրում է նվաստացնել մարդկանց: Նա հաճախ է սեռական բնույթի ակնարկներ և անտեղի ժեստեր ուղղում ինձ: Չնայած իմ համառ հորդորներին դադարեցնել այդպիսի վարքագիծը, նա շարունակում է ժամադրություն պահանջել ինձնից:

→ Այդ մասին անհապաղ տեղեկացրեք Ձեր ղեկավարին, մարդկային ռեսուրսների բաժնին կամ նշանակված լոկալ կոնտակտային անձին՝ այդ անընդունելի վարքագծի մասին ահազանգելու համար:

Գործընկերներիցս մեկը բազմիցս ենթարկվում է ստորացուցիչ քննադատության իր աշխատանքի համար և կշտամբվել ողջ թիմի ներկայությամբ: Նա գնալով ավելի շատ է բացակայում հիվանդության պատճառով:

→ Անմիջապես տեղեկացրեք Ձեր ղեկավարին, մարդկային ռեսուրսների բաժնի կոնտակտային անձին կամ նշանակված լոկալ կոնտակտային անձին, ով միջոցներ կձեռնարկի՝ վերջ դնելու ոտնձգություններին:

10 ՊԱՅՔԱՐ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ոտնձգությունն առանձին անձի (կամ անձանց խմբի) դեմ ուղղված ցանկացած անցանկալի պահվածք կամ վարքագիծ է, որն իր լրջության և/կամ հաճախակիության պատճառով կարող է թշնամական կամ վախի միջավայր ստեղծել և բացասաբար ազդել անձի՝ իր աշխատանքի մեջ ներգրավվածության վրա: Ոտնձգությունը կարող է լինել «բարոյական» և ստորացուցիչ դիտողությունների, նվաստացումների, ահաբեկումների, ճնշման կամ վիրավորանքների տեսքով: Սեռական ոտնձգությունը անձի հասցեին բազմիցս սեռական բնույթի մեկնաբանություններ անելու կամ սեռական բնույթի վարքագծի դրսևորումն է, որը խաթարում է նրա արժանապատվությունը՝ նման վարքի ստորացնող կամ նվաստացուցիչ բնույթի պատճառով, կամ ստեղծում է սպառնալից, թշնամական կամ վիրավորական միջավայր:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

“Ամունդի»ն գտնում է, որ ցանկացած վարքագիծ կամ գործողություն, որը կարող է խախտել մարդու հարգանքի և մարդկային արժանապատվության իրավունքը և հատկապես բարոյական կամ սեռական ոտնձգության կամ աշխատանքային բռնության ցանկացած դրսևորում, անընդունելի է:

«Ամունդի»-ն ձգտում է կանխել, բացահայտել և պարզաբանել այնպիսի գործողություններ, որոնք խիստ պատժի ենթակա հանցագործություններ են: Անհրաժեշտության դեպքում ցանկացած աշխատակից կարող է դիմել իր ղեկավարին, Մարդկային Ռեսուրսների բաժին և կապի տեղամասեր:

Ոչ մի աշխատակից, փորձնակ կամ պրակտիկանտ չի կարող պատժվել, հեռացվել կամ խտրականության ենթարկվել այն բանի համար, որ նա տուժել է կամ հրաժարվել է ընդունել սեռական կամ բարոյական ոտնձգություն, ինչպես նաև նման գործողությունների մասին ցուցմունքներ տալու համար:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Հարգեմ ուրիշներին,
- Տեղեկանամ ընկերության կողմից ներդրված ներքին կանխարգելիչ գործողությունների քաղաքականության ու ընթացակարգերի մասին,
- Ուշադիր լինեմ իմ շուրջը գտնվող ամեն ինչի և բոլորի նկատմամբ, կապվեմ իմ ղեկավարի, մարդկային ռեսուրսների կամ նշանակված լոկալ կոնտակտային անձի հետ, եթե ես տեղյակ եմ ոտնձգության դեպքերի մասին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Անտեսեմ ոտնձգության դեպքը, որի մասին ես տեղյակ եմ, անկախ նրանից, տուժող անձ եմ, թե վկա, անկախ պատճառից կամ ենթադրյալ հետևանքներից,
- Վարվեմ որևէ կերպ՝ իմանալով, որ այն անցանկալի է:

Ու՞մ պետք է դիմեմ:

Եթե Դուք բախվել եք **սեռական / բարոյական ոտնձգությունների, սեռական խտրականության կամ աշխատավայրում բռնության հետ,** այդ մասին հայտնեք ձեր ղեկավարին, մարդկային ռեսուրսների բաժնին կամ ցանկացած այլ նշանակված լոկալ կոնտակտային անձի:

Նշված դեպքերի մասին հաղորդումները կարող են կատարվել գրավոր կամ բանավոր (կախված երկրից) և դրանք կդիտարկվեն խիստ գաղտնիության պայմաններում:

Կախված որոշ երկրներում գործող կարգավորումներից՝ դուք պետք է դիմեք համապատասխան ներկայացուցչին, որը կարող է չլինել «Ամունդի»-ից:

11 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Սա այն գործունեությունն է, որը Դուք իրականացնում եք Ձեր աշխատաժամանակից դուրս: Բազմակտիվության հասկացությունը կարող է սահմանվել որպես միևնույն անձի կողմից երկու կամ ավելի մասնագիտական, արհեստակցական կամ քաղաքական բնույթի գործունեության միաժամանակյա իրականացում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Վարձու աշխատող հանդիսանալը Ձեզ չի խանգարում միաժամանակ անկախ կամ ինքնազբաղված գործունեություն ծավալել: Գործունեության տեսակների համատեղումը հնարավոր է, քանի որ վճարովի աշխատանքը միակ գործունեությունն է, որը կարգավորվում է աշխատանքային ժամերով: Դրանից հետևում է, օրինակ, որ աշխատակիցները կարող են աշխատել շահույթ չհետապնդող կազմակերպության համար:

Թեև սկզբունքը կայանում է աշխատանքի ազատության մեջ, այնուամենայնիվ աշխատողները պետք է հարգեն մասնագիտական էթիկայի կանոններն իրենց գործատուների հանդեպ: Մեզ մոտ յուրաքանչյուր աշխատակից, իր ողջ աշխատանքային գործունեության ընթացքում ունի «Ամունդի»-ի նկատմամբ հավատարմության պարտավորություն: Այն, որպես կանոն, դրսևորվում է Ընկերության համբավի կամ Ընկերության պատշաճ գործունեության նկատմամբ հոգատարությամբ, մասնավորապես, զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնք կհակասեն Ընկերության շահերին:

Աշխատակիցը նաև չպետք է իրականացնի որևէ արտաքին գործունեություն կամ մանդատ այն ընկերությունում/կառույցում, որը պայմանագրային կապ ունի Ամունդի խմբի որևէ կառույցի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Գլխավոր ղեկավարությունը և Համապատասխանության բաժինը տրամադրում են բացահայտ թույլտվություն:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Նախապես տեղեկացնեմ իմ ղեկավարին և մարդկային ռեսուրսների բաժնին, ինչպես նաև որևէ փոփոխություն առաջանալու դեպքում, որ ես մտադիր եմ իմ աշխատաժամանակից դուրս զբաղվել վճարովի գործունեությամբ (բացառությամբ ստեղծագործելը գիտական, գրական և գեղարվեստական ոլորտներում):
- Անհրաժեշտության դեպքում հայտնեմ այդ գործունեության մասին համապատասխանության պատասխանատուին:
- Հավատարիմ մնամ գաղտնիության, մասնագիտական և առևտրային գաղտնիքի պահպանման պարտավորություններին:
- Լավ ծանոթ լինեմ իմ աշխատանքային պայմանագրի դրույթներին, որոնց ես պարտավոր եմ հետեւել: Անհրաժեշտության դեպքում խնդրեմ մարդկային ռեսուրսների բաժնին դրանց պարզաբանման համար:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Զբաղվեմ այնպիսի գործունեությամբ, որը մրցակցության մեջ է Ընկերության հետ իմ աշխատանքային պայմանագրի գործողության ընթացում (ներառյալ օգտագործելով արձակուրդը կամ ընկերությունում վերապատրաստման ժամանակահատվածը վարձատրվող այլ աշխատանք կատարելու համար՝ անկախ նրանից, տվյալ ընկերությունը մրցակից է թե՝ոչ):
- Զբաղվեմ իմ մասնագիտական գործունեությունից դուրս այնպիսի աշխատանքով, որը կարող է խոչընդոտել աշխատանքային նպատակների իրականացմանը կամ առաջացնել շահերի բախում
- Զբաղվեմ մասնագիտական գործունեությունից դուրս այլ աշխատանքով իմ՝ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքային ժամերին:
- Օգտագործեմ իմ տրամադրության տակ գտնվող աշխատանքային միջոցները, իմ մասնագիտական գործունեությունից դուրս այլ աշխատանք իրականացնելու համար:

ՕՐԻՆԱԿ

Ես առաջարկ եմ ստացել միանալ ներդրումային խորհրդատուների ասոցիացիային, արդյո՞ք կարող եմ համաձայնվել:

→ Դուք պետք է այդ մասին տեղեկացնեք Ձեր ղեկավարին և ծանուցեք համապատասխանության բաժին, որպեսզի վերջինս կարողանա գնահատել շահերի բախման հավանականությունը: Ձեզ կարող են խնդրել մերժել այդ առաջարկը:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Չեմ հասկանում, թե ինչու է մեզ անհանգստացնում շրջակա միջավայրը: Մենք գործարաններ ունեցող արդյունաբերական կազմակերպություն չենք:

→ «Գիտակցելով, որ որպես ոլորտի առաջատար իր պարտքն է օրինակ ծառայելը, Ամունդին ձգտում է կիրառել սոցիալական պատասխանատվության սկզբունքներն իր կորպորատիվ գործընթացներում: Ամունդին պարտավորվում է նվազեցնել իր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վերահսկելով CO2 արտանետումները՝ էներգիայի սպառման և գործնական ճանապարհորդությունների ակտիվ կառավարման, թղթի պատասխանատու օգտագործման և թափոնների վերամշակման միջոցով բնապահպանական գործողություններ իրականացնելով, աշխատակիցների շրջանում «էկո-գործողությունների» մասին իրազեկվածություն բարձրացնելով և զարգացնելով կանաչ SS»:

12 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը սահմանվում է որպես կազմակերպությունների՝ հասարակության վրա իրենց ունեցած ազդեցությամբ պայմանավորված պատասխանատվություն, մասնավորապես ինչպես են դրանք նպատակամետ համադրում սոցիալական և բնապահպանական գործոնները իրենց բիզնես գործունեության, ինչպես նաև շահակիրների հետ հարաբերությունների մեջ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ընկերությունները պետք է նպաստեն կայուն զարգացմանը՝ ներառյալով հասարակության առողջությանն ու բարեկեցությանն առնչվող հարցեր: Դրա համար անհրաժեշտ է.

- հաշվի առնել շահագրգիռ կողմերի ակնկալիքները,
- ամբողջությամբ համապատասխանել իրավական պահանջներին և անգամ գերակատարել դրանք,
- Ներդրում կատարել մարդկային կապիտալի և շրջակա միջավայրի մեջ,
- ներդնել այս սկզբունքներն ամբողջ կազմակերպությունում՝ կիրառելով դրանք թե՛ ներքին, թե՛ արտաքին հարաբերություններում:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Ամունդին» հաշվի է առնում կլիմայական փոփոխության դեմ պայքարը և անցումը դեպի էներգիայի նոր աղբյուրներին իր գործարար և կորպորատիվ գործընթացներում: Այս իմաստով այն ունի երկու նպատակ՝ զարգացնել էկոլոգիապես մաքուր ներդրումները և աջակցել հաճախորդներին՝ դիմագրավելու բնապահպանական մարտահրավերերին հետևյալ ճանապարհներով.

- առաջարկելով ներդրումային լուծումներ և ծառայություններ, որոնք ունեն բնապահպանական ուղղվածություն,
- ներառելով բնապահպանական ռիսկը թողարկողի ոչ ֆինանսական գնահատման մեջ,
- բազմապատկելով կլիմայական փոփոխության դեմ պայքարող նախագծերի և նախաձեռնությունների բնագավառում ներդրումները և խրախուսել անցումը դեպի էներգիայի նոր աղբյուրներին:

Նվազեցնել իր գործունեության ուղղակի բնապահպանական հետևանքները՝

- անընդհատ բարելավելով Ընկերությանը պատկանող շինությունների բնապահպանական արդյունավետությունը,
- Նվազեցնելով էներգիայի սպառումը,
- ներառելով բնապահպանական պահանջներն իր՝ մատակարարների ընտրության չափորոշիչներում,
- նվազեցնելով արտադրված թափոնների քանակն իր տարածքերում և բարելավելով թափոնների վերամշակման գործընթացը,
- խնայելով բնական ռեսուրսները,

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Իրազեկ լինեմ իմ առօրյա վարվելակերպի բնապահպանական ազդեցության մասին,
- անձնական պատասխանատվություն ստանձնեմ և հաշվի առնեմ իմ մասնագիտական գործունեությունից առաջացող ուղղակի կամ անուղղակի բնապահպանական հետևանքները,
- հանձն առնեմ նպաստել «Ամունդի»-ի բնապահպանական նպատակների իրագործմանը , թե՛ հաճախորդների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններում, թե՛ Ընկերությունից դուրս:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Անտեսեմ «Ամունդի»-ի բնապահպանական նպատակներն ու հանձնառությունները:

ՄԵՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13. Պայքար կաշառակերության դեմ
14. Պետական պաշտոնյաների հետ հարաբերություններում նրանց ազդեցության չարաշահման դեմ պայքար
15. Պայքար ընթացակարգերի պարզեցման համար կատարվող վճարների դեմ
16. Շահերի բախում
17. Նվերներ և հրավերներ
18. Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորում և լոբբինգ
19. Պատրոնաժ և բարեգործական գործունեություն
20. Հովանավորչություն

13 ՊԱՅՔԱՐ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Մատակարարներից մեկն ինձ առաջարկում է հանգստյան օրերն անցկացնել ծովափին: Փոխարենը, ես պարզապես պետք է տվյալ մատակարարին նախատեսված վճարումը իրականացնեմ մի քանի շաբաթ ավելի շուտ: Արդյո՞ք կարող եմ համաձայնվել:

→ Արգելվում է չարաշահել Ձեր դիրքն ու պարտականությունները նվերներ կամ օգուտներ ստանալու համար: Դրա մասին ամիջապես զգուշացրեք Ձեր ղեկավարին, Համապատասխանության բաժնին կամ Գնումների բաժնին:

Իմ ծանոթներից մեկը, ում հետ ես շատ լավ հարաբերություններ ունեմ, հրավիրել է ինձ աշխարհի մյուս ծայրում տեղի ունեցող մի միջոցառման: Նրանք նաև առաջարկել են մասամբ վճարել ճանապարհորդության համար: Ի՞նչ պետք է անեմ ես:

→ Քաղաքավարի կերպով հրաժարվե՛ք առաջարկից: «Ամունդի»-ի և նրա աշխատակիցների ակախությունն ապահովելու համար հնարավոր չէ ճանապարհորդության, անգամ գործուղման ծախսերը մասամբ կամ ամբողջությամբ հոգալ երրորդ կողմի միջոցներով: Մյուս կողմից, եթե բոլոր ծախսերը հոգում է «Ամունդի»-ն, Դուք կարող եք մասնակցել այդ միջոցառմանն առանց Ձեր ծանոթին պարտք մնալու:

Իմ ղեկավարը խնդրում է ինձ առաջարկել մեզ արտաքին ծառայություն մատուցող ընկերություններից մեկին աշխատանքի ընդունել իր երեխաներից մեկին: Ի՞նչ պետք է անեմ:

→ Հարցն անհրաժեշտ է ներկայացնել այն անձի ուշադրությանը, ով հանդիսանում է Ձեր ղեկավարի անմիջական ղեկավարը:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Կաշառակերությունը հանրային կամ մասնավոր որոշակի գործունեություն իրականացնող անձի արարք է, որը հայցում, առաջարկում, տալիս կամ ընդունում է որոշակի վճար, պարգև, խոստում կամ որևէ այլ ոչ իրավաչափ առավելություն իր պարտականությունների ոլորտին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերող գործողություն կատարելու, կատարումն ուշացնելու կամ անգործություն ցուցաբերելու նպատակով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Ֆրանսիական օրենսդրությունում տարբերակվում է կաշառք տվողի կողմից նախաձեռնած ակտիվ կաշառակերության հանցանք եւ կաշառք ստացողի նախաձեռնած պասիվ կաշառակերության հանցանք:

Ակտիվ կաշառակերությունը կանխամտածված գործողություն է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ուղղված է պետական պաշտոնատար անձանց կամ անհատներին առաջարկությունների, խոստումների, նվիրատվությունների, նվերների կամ ցանկացած այլ առավելությունների տրամադրմանը, որպեսզի նրանք կատարեն կամ ձեռնպահ մնան իրենց պարտականությունների շրջանակներում որեւէ գործողություն կատարելուց:

Պասիվ կաշառքը վերաբերում է պետական պաշտոնյաներին կամ անհատներին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պահանջում կամ ընդունում են խոստումներ, նվիրատվություններ, նվերներ կամ որեւէ առավելություն իրենց կամ ուրիշների համար, իրենց պարտականությունների շրջանակներում որեւէ գործողություն կատարելու կամ դրա կատարումից ձեռնպահ մնալու համար: Կաշառակերությունը կարող է լինել ներքին (ներառելով միայն «Ամունդի»-ի աշխատակիցներին) կամ արտաքին (ներառելով «Ամունդի»-ից դուրս ֆիզիկական կամ իրավաբանական անձանց): Կաշառակերության ցանկացած դրսևորում կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության և / կամ ֆինանսական պատժամիջոցների:

ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱՅԻ ՀԱՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Կաշառակերության դեմ պայքարի մեր քաղաքականությունը պարզ է: Աշխատակիցներին խստիվ արգելվում է որևէ կերպ մասնակցել կաշառակերության դեպքերին՝ անկախ ձևից կամ պատճառից :

Կոռուպցիան խոչընդոտում է ազատ մրցակցությանը և տնտեսական զարգացմանը: Այն կարող է ունենալ շատ լուրջ ֆինանսական, առևտրային եւ քրեական հետևանքներ, որոնք կարող են լրջորեն վնասել «Ամունդի»-ի հեղինակությանը եւ նրա իմիջին: Կոռուպցիոն զանցանքում ակտիվորեն ներգրավված աշխատակիցները նույնպես կարող են ենթարկվել կարգապահական եւ նույնիսկ քրեական պատասխանատվության:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Հնարավորինս շուտ հայտնեմ իմ ղեկավարին և համապատասխանության բաժնին կաշառակերության բոլոր ի հայտ եկած դեպքերի և փորձերի մասին՝ անկախ նրանից թե դրանք ներքին են ե արտաքին, որպեսզի դրա դեմ պայքարը լինի առավել արդյունավետ,
- Հայտնեմ բոլոր նվերներ ու օգուտների մասին, որ ստացել կամ առաջարկել եմ համապատասխան Ամունդի-Ակբայի կողմից նախատեսված դրույթների,
- Հետևեմ գործող ընթացակարգերին աշխատակիցների կողմից կատարված ծախսերի հաստատման մասին,
- Զգոն լինեմ և հսկեմ միջնորդների և մատակարարների հետ հարաբերությունները,
- Հետևեմ «Ամունդի»-ի կողմից հաստատված աշխատակիցների աշխատանքի ընդունման քաղաքականությանը,
- Հետևեմ, որ բոլոր վճարումները լինեն պատշաճ կերպով հիմնավորված, փաստաթղթավորված և թույլատրված:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Առաջարկեմ, խոստանամ կամ համաձայնվեմ որևէ օգուտ տալ (ֆինանսական կամ այլ), որևէ երրորդ կողմի նրանց որևէ գործողություն կատարելուց զերծ մնալու կամ այն ոչ պատշաճ կերպով կատարելուն դրդելու նպատակով,
- Հայցեմ, ստանամ կամ ընդունեմ որևէ օգուտ՝ ֆինանսական կամ այլ, ինչ-որ առաջադրանք կատարելու, առևտրային պայմանագրի ներքոհամաձայնություն տալու կամ իմ պարտականությունների կատարման շրջանակում որևէ գործողություն իրականացնելու համար,
- Տենդերի մրցույթի համատեքստում աջակցեմ որևէ երրորդ կողմի,
- Առաջարկեմ կամ ստանամ նվերներ և օգուտներ, որոնք թույլատրված չեն,
- Թույլ տամ, որ ճամփորդությունս մասամբ կամ ամբողջությամբ վճարվի երրորդ կողմի միջոցներով, ներառյալ գործուղումները,
- Անձնական շահերից ելնելով (ընկերներ, ընտանիք և այլն) աջակցեմ որևէ մատակարարի կամ ծառայություն մատուցողի՝ հիմնվելով ոչ օբյեկտիվ չափանիշների վրա (գներ, ծառայություններ, որակ, համբավ և այլն), որոնք չեն համապատասխանում «Կրեդի Ագրիկոլ Խմբի» գնումների քաղաքակաությանը,
- Իմ ղեկավարից կամ վերահսկողից, ով պատասխանատու է ներքին կամ արտաքին աուդիտի համար կամ աուդիտորական մարմնից թաքցնեմ կոռուպցիայի որևէ տարր կամ գործողություն, որը կարող է համարվել այդպիսին:

14 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Պաշտոնական ազդեցության չարաշահումը պետական պաշտոնական դիրք զբաղեցնող, կամ հանրային ծառայություն մատուցելու առաքելությամբ անձանց կամ հատուկ ընտրված պաշտոնյաների կողմից արվող այն գործողություններն են, որոնց արդյունքում ակնկալվում են կամ անօրինաբար ընդունվում են առաջարկներ, խոստումներ, նվերներ կամ որևէ այլ տեսակի օգուտներ իրենց կամ այլ անձանց համար՝ օգտագործելով իրենց իրական կամ ենթադրյալ ազդեցությունը, պետական իշխանությունից կամ հանրային կառավարման համակարգից պարգևեր, աշխատանք, շուկաների վրա ազդելու մեխանիզմներ կամ որևէ այլ հարցում դրական որոշման հանգելու համար:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ազդեցության չարաշահումը որևէ մեկի դիրքը կամ ենթադրյալ ազդեցությունը դրամի վերածելու գործողությունն է՝ երրորդ կողմից ընդունվելիք որոշման վրա ազդեցություն ունենալու միջոցով: Սա ներառում է երեք մասնակից՝ շահառու (ով տրամադրում է օգուտներ կամ նվիրատվություններ կատարում), միջնորդ (ով օգտագործում է իր պաշտոնով պայմանավորված ազդեցությունը) և թիրախային անձ, ով ունի որոշումներ կայացնելու լիազորություն (պետական իշխանություն կամ վարչական ապարատ, հաշտարար, փորձագետ և այլն): Առկա է տարբերություն ակտիվ ազդեցության ձեռքբերման, որը վերաբերում է շահառուին, և պասիվ ազդեցության ձեռքբերման միջև, որը վերաբերում է միջնորդին: Այս երկու զանցանքներից յուրաքանչյուրը դիտարկվում է առանձին և կարող է պատժվել ազատազրկմամբ:

«ԱՄՈՒՆԴԻ» -Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր քաղաքականությունը պարզ է. խստորեն արգելվում է աշխատակիցներին ներգրավվել ազդեցության ձեռքբերման մեջ անկախ ձևից կամ պատճառից:

Բոլոր աշխատակիցները պետք է ծավալեն իրենց բիզնես գործունեությունը համաձայն այն երկրերում գործող հակակոռուպցիոն կանոնների, որտեղ նրանք աշխատում են:

Նվերները, օգուտները և հանրային կապերին առնչվող գործողությունները, որոնք առաջարկվում են պետական պաշտոնյաներին, խստորեն արգելվում են: Պետական պաշտոնյաներին առնչվող որոշ գործողություններ պահանջում են հատուկ ուշադրություն:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Ազդեցության չարաշահման դեմ պայքարը հաջողությամբ առաջ մղելու համար հաղորդեմ իմ ղեկավարին և համապատասխանության բաժնին դրանց հայտնաբերելուն պես՝ անկախ նրանից, թե խոսքը ապացուցված դեպքերի, թե փորձերի մասին է, լինի կազմակերպության ներսում, թե դրանից դուրս,
- հետևեմ պետական պաշտոնյաների գործողությանն առնչվող ընթացակարգերին,
- լինեմ զգոն և պարբերաբար վերահսկեմ պետական պաշտոնյաներին ներառող բոլոր գործարքները,
- հավաստիանամ, որ պետական պաշտոնյաներին առնչվող բոլոր վճարումներն ու ծախսերը պատշաճ կերպով թույլատրված են, հաշվառված և փաստաթղթավորված:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Պետական պաշտոնյային ֆինանսական կամ այլ օգուտ առաջարկեմ, խոստանամ կամ դրանք տալու համաձայնություն տամ՝ նպատակ ունենալով դրդել նրանց ոչ պատշաճ կերպով կատարելու կամ չկատարելու որևէ գործողություն,
- սատարեմ պետական պաշտոնյայի որևէ ազգականի տենդերի, մրցույթի, կամ աշխատակիցների հավաքագրման ընթացում,
- կանխիկ գումար տամ պետական պաշտոնյաներին:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Օտար երկրում մասնաճյուղ բացելու համար մենք պետք է հավանություն ստանանք: Այդ երկրի կառավարության մի աշխատակից առաջարկում է ազդել հավանությունը տվող պաշտոնյայի վրա և փոխանցել պահանջվող գումարի մի մասը բանկային հաշվի: Ի՞նչ պետք է անեմ:

→ Մերժե՛ք և տեղեկացրե՛ք Ձեր ղեկավարին որքան հնարավոր է շուտ և խորհուրդ խնդրեք համապատասխանության պատասխանատուից՝ կոռուպցիոն գործընթացում ներգրավվելուց խուսափելու համար:

Անշարժ գույքի կառուցման հետ կապված նախագծի համատեքստում՝ «Ամունդի»-ի շինարարության թույլտվության դիմումին աջակցելու դիմաց, քաղաքապետարանի ներկայացուցիչը խնդրում է, որ, կառուցվող շենքում մի բնակարան հատկացվի իր ընտանիքի անդամի համար:

→ Մերժե՛ք և տեղեկացրե՛ք Ձեր ղեկավարին և համապատասխանության պատասխանատուին որքան հնարավոր է շուտ, ովքեր անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն՝ տեղական իշխանություններին այս մասին հայտնելու համար: Լավության դիմաց ոչ մի պարգևատրում չի կարելի առաջարկել պետական պաշտոնյային:

15 ՊԱՅՔԱՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

«Ամունդի»-ի համար անշարժ գույքի կառուցման ծրագրի իրականացման թույլտվություն ձեռք բերելու նպատակով մի պաշտոնյա առաջարկել է պարգևատրման դիմաց արագացնել թույլտվությունը ստանալու գործընթացը, որը սովորաբար տևում է մի քանի ամիս: Արդյո՞ք պետք է վճարեմ:

→ Ոչ, քանի որ այն անօրինական է: Այս մասին տեղեկացրեք Ձեր ղեկավարին կամ համապատասխանության մասնագետին, քանի որ ընթացակարգերի պարզեցման համար վճարումները կարող են համարվել կոռուպցիոն:

Ես պետք է գործնական ուղևորություն կատարեմ մի երկիր, որի համար ինձ հարկավոր է մուտքի արտոնագիր (վիզա): Դեսպանատան աշխատակիցն ինձ տեղեկացնում է , որ վիզա ստանալու համար անհրաժեշտ ժամանակն ավելին է, քան ես սպասում էի: Նա ինձ առաջարկում է վճարել որոշակի գումար՝ գործընթացն արագացնելու համար: Ի՞նչ պետք է անեմ հիմա:

→ մերժեք այս առաջարկը և այդ մասին անհապաղ հայտնեք Ձեր ղեկավարին կամ համապատասխանության պատասխանատուին:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ընթացակարգերի պարզեցման համար կատարվող վճարները քաղաքացիական ծառայողին եւ/կամ պետական պաշտոնատար անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրվող ոչ մեծ վճարումներ են՝ սովորական գործունեության պայմաններում ընթացակարգերն արագացնելու կամ երաշխավորելու համար, որոնց նկատմամբ վճարողն ունի օրինական իրավունք: Այդ վճարումները կատարվում են, մասնավորապես, մուտքի արտոնագրի դիմումի դիտարկման, արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի կամ մաքսային ձևակերպումների տրամադրման հետ կապված:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Այդ վճարումները համարվում են կոռուպցիոն հանցանք: Դրանք արգելված են 1997 թվականի դեկտեմբերի 17-ի Միջազգային առևտրային գործարքներում օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառակերության դեմ Պայքարի մասին ՏՀԶԿ կոնվենցիայով:

«ԱՄՈՒՆԴԻ»-ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ընթացակարգերի պարզեցման համար կատարվող վճարումները խստիվ արգելված են: Բացառությունները կարող են կատարվել միայն այն բացառիկ դեպքերում, երբ աշխատողի անվտանգությունը կամ ֆիզիկական անձեռնմխելիությունը վտանգված է: Նման իրավիճակներում, հնարավորինս արագ պետք է տեղեկացնել համապատասխանության պատասխանատուին: Բացի այդ, ընթացակարգերի պարզեցման համար կատարվող վճարումները պետք է պատշաճ կերպով նույնականացվեն և և ձևակերպվեն ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերում:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Տեղեկացնեմ իմ ղեկավարին կամ համապատասխանության պատասխանատուին ընթացակարգերի պարզեցման համար հանրային պաշտոնյայի կողմից վճարումներ կատարելու , առաջարկ ստանալու մասին:
- Տեղեկացնեմ իմ ղեկավարին կամ համապատասխանության պատասխանատուին, եթե բացառիկ իրավիճակում ես կատարել եմ մի գործողություն, որը կարող է դիտվել որպես ընթացակարգերի պարզեցման վճար:
- Պահեմ բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են ցանկացած գործարքի, որը կարող է համարվել վճարման համար պարզեցված վճարում:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Սովորական վարչական խնդրի կատարման համատեքստում առաջարկեմ, խոստանամ կամ օգուտ տամ (ֆինանսական կամ այլ) հանրային պաշտոնատար անձի:
- Միջնորդեմ ինքս, երբ գործ ունենամ վճարման ընթացակարգը պարզեցնելու խնդրանքի կամ առաջարկի հետ:

16 ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Շահերի բախում է համարվում այն իրավիճակը, երբ աշխատողի անձնական շահերը կարող են հակասել հաճախորդի կամ ընկերության շահերին:

Այլ կերպ ասած, շահերի բախումը որևէ մասնագիտական իրավիճակ է, որտեղ անձի, ընկերության կամ կազմակերպության անաչառությունը կամ որոշումների կայացումը, իրենց անկախության կամ ամբողջականության տեսանկյունից, կարող է ազդեցության ենթարկվել կամ փոփոխվել անձնական նկատառումներից ելնելով կամ երրորդ կողմի ճնշման ներքո:

Շահերի բախումները կարող են լինել անձնական, մասնագիտական, ֆինանսական և քաղաքական բնույթի:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Ֆինանսական կազմակերպությունները պետք է պաշտոնապես վերահսկեն շահերի բախման կառավարման գործընթացը, որոնք կարող են առաջանալ իրենց գործունեության ընթացքում: Այդ նպատակով նրանք պետք է ներդնեն և հետևեն արդյունավետ կազմակերպական մեխանիզմների կիրառումը՝ ձեռնարկելով բոլոր ողջամիտ միջոցները, որպեսզի կանխվեն շահերի բախման ազդեցությունը իրենց հաճախորդների շահերի վրա: Հաճախորդների շահերի գերակայությունը կարևոր տարր է շահերի բախման կառավարման մեջ:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Կրեդի Ագրիկոլ Խմբի» նորմատիվ պահանջներին և ընթացակարգերին համապատասխան «Ամունդի»-ն ներդրել է շահերի բախման կանխարգելման եւ կառավարման համակարգ: Այնպիսի գործողություններ, ինչպիսիք են կոռուպցիան կամ ազդեցության չարաշահումը, կարող են Ընկերությանը և նրա աշխատակիցներին կողմնակալության կամ անազնվության մեղադրանքների մեջ ներքաշել: Նշված գործողությունները կարող են հետևանքներ ունենալ նաև «Ամունդի»-ի և նրա աշխատակիցների հեղինակության և բարի համբավի վրա:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Հետևեմ «Ամունդի»-ի կանխարգելիչ սկզբունքներին և միջոցներին, հատկապես նվերների և հրավերների, հասարակական գործունեության և մասնագիտական գործունեությունից դուրս զբաղվածության վերաբերյալ, ապահովելու համար իմ անկախությունը դատողություններ անելիս և խուսափել շահերի բախման իրավիճակներից,
- Տեղեկացնեմ իմ՝ ընտրված պետական պաշտոնների մասին իմ ղեկավարին և համապատասխանության մասնագետին,
- Տեղեկացնեմ իմ ղեկավարին և համապատասխանության մասնագետին վարչական, կառավարման կամ գործադիր գործառույթների մասին, որոնք ես կատարում եմ մասնավոր հիմունքներով որևէ առևտրային կազմակերպությունում (հաճախորդ, «Ամունդի»-ի մատակարար և այլն),
- Տեղեկացնեմ իմ ղեկավարին որևէ անձնական կամ ընտանեկան կապի մասին, որը ես կարող եմ ունենալ իմ ընկերության հետ փոխկապված երրորդ կողմի հետ,
- Տեղեկացնեմ համապատասխանության ղեկավարին ցանկացած հնարավոր ուղղակի կամ անուղղակի շահերի բախման իրավիճակի մասին և ձեռնպահ մնամ քննարկումներին մասնակցելուց կամ տվյալ հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելուց:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Որոշումներ կայացնեմ, եթե իմ անաչառությունը կամ որոշումները կարող են ազդեցության ենթարկվել կամ փոփոխվել անձնական նկատառումներից ելնելով կամ երրորդ կողմի ճնշմամբ,
- Թաքցնեմ տեղեկատվություն շահերի բախման որևէ դեպքի կամ իրադրությունների մասին, որոնք կարող են առաջացնել այդպիսի իրավիճակ,
- Շահագրգիռ դիրք ձեռք բերեմ մրցակցի, հաճախորդի կամ մատակարարի հանդեպ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Իմ ղեկավարը հարցնում է իմ կարծիքը նոր մատակարարի ընտրության առումով, քանի որ տատանվում է երկու ընկերությունների միջև: Պարզվում է, որ ընկերություններից մեկի տնօրենն իմ մանկության ընկերներից է: Ի՞նչ վարքագիծ պետք է որդեգրեմ:

→ Շահերի բախման որևէ իրավիճակից խուսափելու համար՝ Ձեր կառավարչին գրավոր տեղեկացրե՛ք այդ փոխկապակցվածության մասին և մի մասնակցեք մատակարարի ընտրության գործընթացին:

Եղբայրս ծառայություններ է մատուցում վերապատրաստումներ կազմակերպող ընկերությունում, և այն ծառայությունները, որոնք նա առաջարկում է, մրցունակ են և համապատասխանում են մեր կարիքներին: Արդյո՞ք ես պետք է խուսափեմ դրանցից օգտվելուց:

→ Գրավոր եղանակով տեղեկացրե՛ք այս փոխկապակցվածության մասին Ձեր ղեկավարին, ով պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ խուսափելու համար շահերի հնարավոր բախումից: Մասնավորապես, մի՛ մասնակցեք ծառայություն մատուցող անձի ընտրությանը:

17 ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՐԱՎԵՐՆԵՐ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Ես ստացել եմ վինտաժային շամպայնի շիշ, կարո՞ղ եմ պահել այն:

→ Ամունդի խմբի կողմից սահմանված նվազագույն արժեքից բարձր ցանկացած նվեր, օգուտ կամ հրավեր, որն ստացվել է երրորդ կողմից կամ առաջարկվել երրորդ կողմին, պետք է պարտադիր կերպ զեկուցվի Ձեր ղեկավարին: Ավելին, եթե միավորի կամ կուտակային արժեքը գերազանցում է խելամիտ արժեքը կամ որոշակի հատուկ դեպքերում, սկսած առաջին իսկ եվրոյից, Դուք պետք է ստանաք Ձեր ղեկավարի համաձայնությունը, և Համապատասխանության բաժինը պետք է անմիջապես տեղեկացվի:

Աշխատում եմ մի երկրում, որտեղ ընունդված է խոշոր արտասահմանյան ընկերությունների կողմից հիմնական քաղաքական կուսակցություններին նվիրատվություն անելը: Արդյո՞ք հնարավոր է նվիրատվություն անել «Ամունդի»-ի անունից:

→ Ո՛չ: Եթե անգամ նվիրատվությունը թույլատրվում է տեղական օրենքներով կամ սովորույթներով, «Ամունդի»-ն կարող է պատասխանատվության ենթարկվել: Անհապաղ տեղեկացրեք Ձեր ղեկավարին և համապատասխանության պատասխանատուին:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Կորպորատիվ նվերները գործարար հարաբերությունների համատեքստում առաջարկվող նվերներն են: Որոշ նվերներ կարող են ունենալ զգալի արժեք (ճամփորդություններ, էլեկտրոնային սարքավորումներ, գինի, շամպայն և այլն) և, հետևաբար, վերահսկվում են կոռուպցիայի ռիսկերից խուսափելու համար: Հրավերները ներառում են սոցիալական շփումների և հրավերների ցանկացած ձև, լինի դա առաջարկված, թե ստացված: Գործարար համատեքստում բիզնեսի զարգացման այդ փոխգործակցությունները կարող են լինել ճաշեր, հյուրանոցային կացության, սեմինարների, համաժողովների կամ մշակութային, սպորտային և սոցիալական միջոցառումների հրավերներ՝ համաձայն տեղական սովորույթների: Կարող են ավելացվել նաև գործարար և մամուլի ճանապարհորդությունները:

«ԱՄՈՒՆԴԻ»-ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատակիցները չպետք է ընդունեն նվերներ կամ հրավերներ՝ուղղակի կամ անուղղակի, որոնք կարող են, անգամ ոչ միտումնավոր, վնասել նրանց անկախությանը, անկողմնակալությանը կամ անաչառությանը: Անհրաժեշտ է մերժել բոլոր նվերներն ու հրավերները, որոնք կարող են շահերի բախման պատճառ հանդիսանալ:

Նմանապես, արգելվում է նվերներ խնդրել այն անհատներից կամ ընկերություններից, որոնք կամ ունեն, կամ ձգտում են զարգացնել գործարար հարաբերություններ Ամունդիի հետ:

Նույն կերպ չի թույլատրվում անհատներից կամ կազմակերպություններից նվերներ ակնկալել, որոնք կամ ունեն կամ փորձում են գործարար հարաբերություններ ունենալ «Ամունդի»-ի հետ: Ընդունված կամ տրամադրված նվերների և օգուտների համար առկա է առավելագույն չափ՝ տարեկան կտրվածքով և ըստ գործարար հարաբերության տեսակի: Եթե նվերի կամ օգուտի արժեքը գերազանցում է թույլատրված առավելագույն չափը (սահմանված համաձայն տեղական պահանջների), աշխատակիցը պարտավոր է նախքան այն ընդունելը կամ տրամադրելը տեղեկացնի իր ղեկավարին կամ Համապատասխանության պատասխանատուին, որոնք ըստ անհրաժեշտության կտան իրենց համաձայնությունը: Ոչ մի նվեր չի թույլատրվում ուղարկել աշխատակցի տան հասցեով, և նա պարտավոր է տրամադրել միայն իր աշխատանքային հասցեն՝ նվերների առաքման նպատակով: «Ամունդի»-ն չի արգելում գործարար կապերի զարգացման համատեքստում արվող նվերների կամ հրավերների առաջարկը կամ ընդունումը: Այդպիսի գործողությունները պետք է ունենան հստակ կոմերցիոն հիմնավորում և պետք է ստանալ ղեկավարի նախնական թույլտվությունը, եթե նախատեսված առավելագույն չափը գերազանցվում է: Կասկածի դեպքում անհրաժեշտ է դիմել Համապատասխանության բաժնին՝ կարծիք հայտնելու համար:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Ղեկավար լինելու դեպքում հավաստիանամ, որ իմ անձնակազմը տեղյակ է ներքին կանոններից, որոնք վերաբերում են նվերներին և հրավերներին, գործարար կապերի զարգացման գործողություններին և գործուղումներին,
- Նախքան նվեր կամ հրավեր ստանալը՝ հարցնեմ ինքս ինձ՝ թե ինչպես այն կարող է ընկալվել հանրության կողմից և մերժեմ այն առաջարկները, որոնք շահերի բախում կարող են առաջացնել,
- Թափանցիկ լինեմ իմ ղեկավարի հետ՝ կասկածներից խուսափելու համար,
- Մերժեմ թանկարժեք միջոցառումների հրավերները,
- Եթե ընդունում եմ հրավեր, վճարեմ դրա հետ կապված ճանապարհածախսը և կեցության ծախսերը,
- Հետևեմ տեղեկատվության բացահայտման ներքին ընթացակարգին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Ընդունեմ կամ տամ թույլատրելի առավելագույն չափը գերազանցող նվերներ կամ օգուտներ կամ դրանք ստանամ իմ տան հասցեով՝ անկախ չափից,
- Ակնկալեմ որևէ նվեր կամ օգուտ ինձ համար կամ երրորդ կողմի անունից,
- Պայմանագիր կնքող մյուս կողմից, միջնորդից, մատակարարից կամ հաճախորդից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանամ որևէ վարձատրություն,
- Տամ կամ ստանամ կանխիկ նվերներ:

18 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼՈԲԲԻՆԳ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Լոբբինգը կամ շահերի ներկայացումը բնութագրվում է որպես պետական պաշտոնյաների հետ ուղղակի կամ անուղղակի հաղորդակցություն պետական որոշումների վրա ազդեցություն ունենալու նպատակով: Շահեր ներկայացնող մարդկանցից խորհրդատվություն ստանալը հնարավորություն է տալիս օրենսդրին ստանալու տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է կիրառվում օրենքը և ինչպես բարելավել այն: Այն նաև պետական որոշումներ կայացնողներին խորքային տեղեկատվություն է տալիս՝ քաղաքացիական հասարակության ակնկալիքների մասին:

Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը իրավաբանական անձանց կողմից (ընկերություններ, հիմնադրամներ և այլն) խստիվ արգելվում է:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Համապատասխան առևտրային ասոցիացիաների, ինչպես նաև «Ամունդի»-ի կազմակերպությունների և/կամ «Կրեդի Ագրիկոլ Խմբի» փորձագետների և գործող մասնագետների հետ համագործակցելով՝ լոբբինգը «Ամունդի»-ին հնարավորություն է տալիս դրականորեն նպաստելու այնպիսի կանոնակարգերի զարգացմանը կամ փոփոխություններին, որոնք առնչվում են իր գործունեությանը: Լոբբինգի նպատակն է՝ իր գործունեության ոլորտներին հարող օրենսդրական և կարգավորող որոշումները բարելավելու համար պատճառաբանված և մասնագիտական տեսակետ ապահովելը: «Ամունդին» համապատասխանում է «Կրեդի Ագրիկոլ Խմբի» Պատասխանատու Լոբբինգի մասին Կանոնադրության հանձնառություններին: Ի լրումն քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման արգելքի բացարձակ պահպանմանը, անգամ այն երկրներում, որտեղ այս գործունեությունը թույլատրված է, «Ամունդին» պահպանում է «Կրեդի Ագրիկոլ Խմբի» հանձնառությունները՝ պնդելով, որ իր աշխատակիցների քաղաքական համոզմունքներն ու հանձնառությունները մնան անձնական՝ խմբի հեղինակությունը չվտանգելու համար: Այս հանձնառությունները պետք է արվեն աշխատանքային ժամերից և Ընկերությունից դուրս:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Իմ լոբբիստական գործունեության մասին թափանցիկ լինեմ «Ամունդի»-ի ներսում և դրանից դուրս,
- հայտարարագրեմ տարբեր առևտրային ասոցիացիաներում իմ զբաղեցրած պաշտոնները,
- փաստարկներս հիմնեմ հուսալի տեղեկատվության վրա, որը ենթարկվել է վերլուծության և աուդիտի՝ ներքին մակարդակում,
- ընդգծեմ հետևանքները տարբեր շահագրգիռ կողմերի համար,
- գրանցեմ բոլոր կազմակերպությունները, որոնց անունից ես լոբբիստական գործունեություն եմ ծավալում շահերի ներկայացուցիչների մատյանում, եթե կա այդպիսին,
- թարմացնեմ պետական որոշումների վրա ազդեցություն ունենալու նպատակով պետական որոշումներ կայացնողների հետ հադիպումների ցանկը, որպեսզի օրենքին համապատասխան կազմեմ իմ գործողությունների տարեկան զեկույցը,
- զեկուցեմ իմ ընտրովի հանրային մանդատները ղեկավարիս և Համապատասխանության պատասխանատուին:
- իմ ղեկավարին և համապատասխանության պատասխանատուին հայտնեմ իմ ընտրած/անդամակցած պետական գրասենյակների մասին,
- հավաստիանամ, որ իմ քաղաքական կարծիքներն ու գործողությունները «Ամունդի»-ին ոչինչ չեն պարտավորեցնում ,
- մերժեմ որևէ ձևով որևէ խնդրանք, որն ակնկալում է իմ քաղաքական աջակցությունը և կարող է պատասխանատու դարձնել «Ամունդի»-ին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- կիրառեմ կոռուպցիոն, շահագործող կամ որևէ այլ անազնիվ գործելաոճ,
- օգտագործեմ «Ամունդի»-ի ռեսուրսները, կամ ֆոնդերը՝ դրանք դրամահավաքների կամ քաղաքական աջակցության գործունեության մեջ ներգրավելու համար,
- առաջարկեմ կամ ստանամ որևէ նվեր կամ օգուտ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Ի՞նչ պետք է անեմ, եթե մեր հաճախորդերից մեկն ինձ խնդրում է աջակցել տեղական ընտրություններում իր ընտրարշավին:

→ Մերժե՛ք աջակցության համար խնդրանքը, որպեսզի ապահովեք «Ամունդի»-ի չեզոքությունը և անհապաղ տեղեկացրեք Ձեր ղեկավարին կամ համապատասխանության պատասխանատուին:

Աշխատում եմ մի երկրում, որտեղ խոշոր օտարերկրյա ընկերությունների կողմից հիմնական քաղաքական կուսակցություններին ֆինանսավորումը սովորական երևույթ է: Կարո՞ղ է «Ամունդին» այդպիսի նվիրատվություն անել:

→ Ո՛չ: Եթե ագամ այսպիսի դրամական աջակցությունը թույլատրվում է օրենքով կամ ըստ տեղական սովորույթների, այն կարող է ենթարկել «Ամունդի»-ին պատասխանատվության: Անհապաղ տեղեկացրեք Ձեր ղեկավարին կամ համապատասխանության պատասխանատուին:

19 ՊԱՏՐՈՆԱԺ ԵՎ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Մի հաճախորդ կապ է հաստատում ինձ հետ՝ պարզելու «Ամունդի»-ի կողմից իրեն քաջածանոթ մի բարեգործական ասոցիացիայի ֆինանսավորման հնարավորությունը: Ի՞նչ պետք է անեմ այդ իրավիճակում:

→ Դուք պետք է անմիջապես կապ հաստատեք Ձեր ղեկավարի և/կամ հաղորդակցությունների բաժնի հետ՝ գնատահելու իրավիճակը և որոշելու, թե ինչ ուղիով առաջ ընթանալ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Պատրոնաժը (patronnage) այն ֆինանսական կամ նյութական աջակցության ձևն է, որը տրամադրվում է ընկերության կամ անհատի կողմից ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նախաձեռնությանը կամ գործունեությանը (մշակութային, հետազոտական, հումանիտար հարցեր և այլն): Այն տարբերվում է հովանավորչությունից (sponsorship) և ֆինանսական աջակցություն ցուցաբերելուց, պայմանագրային հարաբերություններում չի նախատեսվում գովազդ կամ հանրային հաղորդակցություն՝ պատրոնի տրամադրած աջակցության մասով: Հետևաբար պատրոնի (patron) ներգրավումը միջոցառման կամ նախաձեռնության մեջ համեմատաբար զուսպ է, բայց կարող է հղում կատարվել իր իսկ հաղորդակցության խողովակներով: Պատրոնաժը հաճախ կապված է կորպորատիվ արժեքների հետ, բայց կարող է օգտագործվել զարգացնելու իմիջը կամ հաղորդակցությունը ու/կամ ներքին շահադրդող նպատակները: Պատրոնաժն օգտվում է հարկային արտոնություններից ի տարբերություն հովանավորչության, որը համարվում է գովազդային ներդրում:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրումից ի վեր «Ամունդին» ստանձնել է պարտավորություններ, հատուկ հատկանիշներ, որոնք այլևս արմատացած են Ընկերության ԴՆԹ-ի մեջ և արտացոլվում են կորպորատիվ արժեհամակարգում:

Մեր կորպորատիվ պատրոնաժի քաղաքականությունը հիմնված է Ընկերության և «Կրեդիտ Ագրիկոլ Խմբի» արժեքների վրա: Մեր գործունեությունը իմաստավորելու համատեքստում մեր աջակցությունը հիմնված է երեք հիմնաքարերի վրա՝ մշակույթ, կրթություն և համերաշխություն: Որևէ նախաձեռնություն կամ նոր աջակցություն պետք է համապատասխանի այս հիմնաքարերից մեկին կամ մի քանիսին: Քանի որ պատրոնաժի նպատակն է աջակցել մեր գործունեության շահառուներին երկարաժամկետ կտրվածքով հավելյալ արդյունք ստեղծելուն, մեր օժանդակությունը հիմնականում կայուն է և միայն բացառիկ դեպքերում է անհատական բնույթ կրում: Աջակցության մեր բոլոր գործողությունները համապատասխանում են «Կրեդի Ագրիկոլ Խմբի» էթիկայի կանոնակարգին:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Աջակցության նոր նախագծի դեպքում՝ համոզվեմ, որ այն համապատասխանում է մեր հիմնաքարերից առնվազն մեկին,
- առաջնահերթություն տամ այն կազմակերպություններին, որոնց հաշիվները հրապարակվում են և պարբերաբար ստուգվում,
- համոզվեմ, որ բոլոր համաձայնությունները, որոնք կնքվում են այդ կազմակերպությունների հետ, ներառում են համապատասխանության դրույթներ և հավաստիանամ, որ հնարավորություն ունեմ վերահսկելու միջոցների տնօրինումը,
- համոզվեմ, որ բարեգործական կազմակերպությունների կրած բոլոր ծախսերը պատշաճ կերպով են կատարվել, հաշվառվել և փաստաթղթավորվել:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Անհատներին կամ շահույթ հետապնդող կազմակերպություններին նվիրատվություն կատարեմ,
- Ֆինանսավորեմ աշխատանքներ, որոնց նպատակը կամ գործողությունները հստակ չեն և չեն կարող ստուգվել,
- աջակցեմ կազմակերպություններին, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ընկերության հեղինակության, իմիջի կամ «Կրեդիտ Ագրիկոլ Խմբի» վրա:
- Կատարեմ կանխիկ վճարումներ:

20 ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Հովանավորչությունը ֆինանսական կամ նյութական աջակցություն է, որը տրամադրվում է միջոցառմանը կամ ֆիզիկական անձին գովազդային գործընկերոջ կողմից՝ տվյալ իրադարձության կամ ֆիզիկական անձի հետ կապված գովազդային տեսանելիության տարբեր ձևերի դիմաց:

Բացի գովազդային նպատակներով տեսանելիության տարբեր ձևերից, հովանավորչական պայմանագրերը կարող են նախատեսել հանրային կապերի հետ կապված մի շարք կոնտրագենտներ հովանավորվող ֆիզիկական անձի մասնակցությունը ընկերության տարբեր միջոցառումներին (կոնֆերանսներ, սեմինարներ, վաճառքի կետերի բացում, արտադրանքի գործարկում և այլն):

Գովազդատու-հովանավորը ձգտում է իրադարձության պոտենցիալ տեսանելիության, ինչպես նաեւ դրական իմիջի փոխանցման՝ կախված հովանավորվող իրադարձության տեսակից եւ դրա հետ կապված արժեքներից: Այն կարող է նաեւ օգտագործել իր հովանավորչական գործունեությունը ներքին մակարդակով՝ աշխատակիցների մոտիվացիայի եւ ներգրավվածության համար:

Հովանավորչության ամենատարածված եւ նկատելի ձևը կապված է սպորտի հետ: Սպորտային հովանավորչությունը տարբերվում է պատրոնաժից՝ ըստ ձևի և հարկային ռեժիմի:

ԱՄՈՒՆԴԻ-ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Սպորտը հովանավորելն «Ամունդի»-ի հաղորդակցության մաս է կազմում:

Հովանավորչությունը պետք է համապատասխանի «Կրեդի Ագրիկոլ Խմբի» սկզբունքներին եւ ներքին կանոններին և երբեք չպետք է օգտագործվի չարդարացված օգուտ ստանալու, ոչ պատշաճ ազդեցության կամ որոշումների կայացման համար պատասխանատու ցանկացած անձի վրա ոչ պատշաճ ազդեցություն թողնելու տպավորության ստեղծման համար:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Ընտրեմ կազմակերպություններ, հաստատություններ կամ ոլորտներ, որոնք համապատասխանում են «Ամունդի» ընկերության նպատակներին եւ արժեքներին,
- Նախապատվություն տամ կազմակերպությունների, որոնց փորձը եւ հեղինակությունը կայացած են, ինչպես նաև որոնց հաշիվները հրապարակվում են և պարբերաբար ստուգվում,
- Կազմեմ համապատասխանության դրույթներ ներառող հովանավորվող կազմակերպության հետ պայմանագիր,
- Իրականացնեմ միջոցառումներ ստուգելու տեսանելիության եւ հասարակայնության հետ կապերի նպատակները:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Հովանավորեմ պետական պաշտոնյայի կողմից առաջարկվող կազմակերպության,
- Հովանավորեմ մի կազմակերպություն, որն անուղղակիորեն օգտվում է կամ վերահսկվում է քաղաքական գործիչների, պետական պաշտոնյաների կամ նրանց հարազատների կողմից,
- Հովանավորեմ մի կազմակերպության այնպիսի նախագծեր, որոնցում «Ամունդին» և / կամ «Կրեդի Ագրիկոլ Խումբը» ներգրավված են առևտրային նպատակներով:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Մի գործունեություն արժանի է հովանավորության: Ու՞մ հետ պիտի կապ հաստատեմ:

→ Առաջին հերթին, դիմե՛ք հաղորդակցության բաժին: Մի կատարեք ֆինանսավորման որևէ գործողություն, որը կարող է վնասել ընկերության հեղինակությանը: Միջոցների բաշխումը պետք է լինի թափանցիկ և իրականացվի հաղորդակցության բաժնի հետ համակարգված:

ՄԵՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ «ԱՄՈՒՆԴԻ»-Ի ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

21. Գաղտնիություն
22. Պայքար թողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ
23. Պայքար հարկերից խուսափելու դեմ
24. Միջազգային պատժամիջոցներ
25. Խարդախության կանխարգելում
26. Շուկայի չարաշահման կանխարգելում
27. Սոցիալական ցանցերից օգտվելը

21 ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Կոնֆիդենցիալությունն ու մասնագիտական գաղտնիքի պահպանությունը ֆինանսական և ակտիվների կառավարման ոլորտի հիմնարար սկզբունքներն են: Դրանք պետք է հանդիսանան աշխատակիցների անդադար հոգածության առարկա՝ անկախ ոլորտից, որտեղ նրանք իրականացնում են իրենց պարտականությունները:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Հաճախորդներին, ինչպես նաև «Ամունդի»-ին, «Կրեդիտ Ագրիկոլ Խմբի» այլ կազմակերպություններին, նրանց աշխատակիցներին, հաճախորդներին և ներքին համակարգին, տեղեկատվական համակարգերին, անվտանգության ընթացակարգերին, մատակարարներին և ենթապայմանագրորդներին վերաբերվող տեղեկատվությունը գաղտնի է: Որևէ գաղտնի տեղեկատվության բացահայտում կազմակերպությանը և աշխատակցին դարձնում է պատասխանատու: Երբ դեպքը վերաբերի ցուցակված կազմակերպության չհրապարակված տեղեկատվության, գաղտնիության պահպանման խախտումը կարող է հանգեցնել քրեական, վարչական կամ մասնագիտական պատասխանատվության:

«ԱՄՈՒՆԴԻ»-ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒԸ

Գաղտնիությունը պետք է հարգել բոլոր հանգամանքներում և կիրառել բոլոր տեսակի լրատվամիջոցների դեպքում: Բոլոր աշխատակիցները հանդիսանում են իրենց ստացած գաղտնի տեղեկատվության պահառուները և պատասխանատուները: Աշխատակիցները կարող են օգտագործել այդ տեղեկատվությունը կազմակերպության ներսում մասնագիտական նպատակներով, իսկ բացահայտեն այն ընկերությունից դուրս միայն արտոնվելու դեպքում կամ օրենքով նախատեսված դեպքերում: Բուն կազմակերպությունում առկա է մի համակարգ, որ հայտնի է որպես «տեղեկատվության արգելք», որը ներդրված է շահերի բախումը կանխելու և զգայուն տեղեկատվության անհարկի շրջանառությունից կամ ոչ պատշաճ կիրառումից խուսափելու համար, մասնավորապես այն տեղեկատվության, որ կարող է դասակարգվել որպես գաղտնի կամ հատուկ: Աշխատակիցները պետք է կիրառեն գաղտնիության սկզբունքը առավելագույն խստությամբ, երբ գտնվում են կազմակերպությունից դուրս: Սա վերաբերում է սոցիալական ցանցերի կիրառությանը, բայց նաև անձնական զրույցներին (ընտանիք, ընկերներ և այլն) կամ հանրային ոլորտին (հանրային տրասպորտ, ռեստորաններ, հանրային վայրեր ընդհանրապես): Նրանք պատասխանատու են իրենց համացանցային հրապարակումների համար և պետք է հավաստիանան, որ չեն տարածում համացանցում տեղեկատվություն, որը նրանք այլ պայմաններում չէին տարածի կազմակերպությունից դուրս: Գաղտնիության սկզբունքը տարածվում է նաև մասնագիտական սոցիալական ցանցերին:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Պահպանեմ «Ամունդի»-ի հաճախորդերի և ընդհանուր առմամբ «Կրեդիտ Ագրիկոլ Խմբին» պատկանող՝ ինձ հասանելի տեղեկատվության խիստ գաղտնիությունը,
- Միշտ ստանամ հաճախորդների հստակ գրավոր թույլտվությունը, երբ պետք է փոխանցեմ իրենց վերաբերող գաղտնի տեղեկատվությունը կամ դրա մի մասը՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք հստակորեն ամրագրված են տեղական կանոններով,
- Տրամադրեմ գաղտնի տեղեկատվությունը միայն «Ամունդի»-ի կամ «Կրեդի Ագրիկոլ Խմբի» ներսում՝ տեղեկատվությանն առնչվող անձանց և բացառապես իրենց պարտականությունների համար:
- Միշտ հավաստիանամ, որ առկա է գաղտնիության պայմանագիր՝ նախքան կազմակերպությունից դուրս ինչ-որ գործընկերոջ գաղտնի տեղեկատվություն տրամադրելը,
- Պաշտպանեմ գաղտնի տեղեկատվությունը չարտոնված օգտագործումից և հասանելիությունից:
- Եթե ունեմ կասկածներ այն տեղեկատվության վերաբերյալ, որն ուզում եմ տարածել սոցիալական ցանցերով, նախապես հարցնեմ իմ ղեկավարին կամ համապատասխանության մասնագետին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Բացահայտեմ որևէ տեղեկատվություն «Ամունդի»-ի հաճախորդների, «Ամունդի»-ի կամ «Կրեդիտ Ագրիկոլ Խմբի» մասին կազմակերպությունից դուրս մարդկանց՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք հստակորեն ամրագրված են տեղական կանոններով,
- Ուղարկեմ որևէ գաղտնի տեղեկատվություն անձնական էլեկտրոնային փոստով,
- Սոցիալական ցանցերով կամ այլ տեղեկատվական այլ միջոց տարածեմ որևէ տեղեկատվություն, որ կարող է վնասել հաճախորդներին, իմ կազմակերպությանը, իմ գործառույթին կամ «Ամունդի»-ին,
- Հանրային վայրերում և անձական կյանքում անդրադառնամ «զգայուն» տեղեկատվության կամ գործարար պայմանագրերին վերաբերվող գաղտնի տեղեկատվության:
- Մասնագիտական հարցերով հաղորդակցվեմ էլեկտրոնային հաղորդագրությունների գործիքներով (WhatsApp, Telegram և այլն), որոնք խմբի պաշտոնական ալիքները չեն:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Ես երթևեկում եմ հանրային փոխադրամիջոցով և ուզում եմ օգտվել ճանապարհին գտնվելուս ժամանակից՝ գործերս առաջ գցելու համար: Արդյո՞ք կարող եմ անել դա:

→ Դյուրակիր համակարգչի էկրանը՝ առանց գաղտնիության ֆիլտրի, հեշտությամբ ընթեռնելի է այլ ուղևորների համար: Այս պայմաններում մի աշխատեք գաղտնի փաստաթղթերի վրա: Նույնը վերաբերում է պլանշետներին և բջջային հեռախոսներին:

Ես պետք է ռազմավարական կոմիտեի արձանագրությունը կազմեմ և գործընկերներիցս մեկն առաջարկել է օգնել ինձ տեքստի ձևակերպման հարցում: Կարո՞ղ եմ այն էլ-փոստով նրան ուղարկել:

→ Դուք պետք է երաշխավորեք փաստաթղթի գաղտնիությունը և սահմանափակեք դրա շրջանառությունը: Եթե Ձեր գործընկերը չէր մասնակցում հանդիպմանը, Դուք չեք կարող նրան տալ այդ առաջադրանքը:

Ես հանրային փոխադրամիջոցում եմ և հեռախոսազանգ եմ ստանում մի հաճախորդից, ով պարզաբանում է ուզում ընթացիկ գործով, և իր հարցերը պահանջում են գաղտնիության տարրեր պարունակող պատասխաններ:

→ Այս դեպքում Դուք պետք է բացատրեք, որ հանրային վայրում եք և որ կապ կհաստատեք նրա հետ, հենց որ մենակ լինեք:

22 ՊԱՅՔԱՐ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Արդյո՞ք իմ հաճախորդի նույնականացումը բավարար է գործարար հարաբերություններ սկսելու համար:

→ Ո՛չ: «Ամունդի Խմբի» յուրաքանչյուր կազմակերպություն պետք է պաշտոնապես նույնականացնի իր ընկերության հաճախորդների իրական շահառուներին՝ օգտագործելով համապատասխան միջոցներ և ստուգի նույնականացման տարրերը՝ համապատասխան հավաստող փաստաթղթերի միջոցով հարաբերություններ սկսելիս, ինչպես նաև նախքան հաճախորդի հետ յուրաքանչյուր գործարքի նախաձեռնումը: Կազմակերպությունները պետք է կարողանան ցույց տալ իրենց պատշաճ ուսումնասիրության արդյունքները և պահպանեն հավաստող փաստաթղթերը:

→ Եթե հնարավոր չէ նույնականացնել գործարար հարաբերության իրական շահառուին, ապա այդ հարաբերությունների շարունակությունը պետք է հարցականի տակ դրվի, իսկ դադարեցումը ուսումնասիրվի և փաստաթղթավորվի:

Նկատում եմ, որ հաճախորդը, կարծես, գործունեությունը է ծավալում այնպիսի ոլորտներում կամ աշխարհագրական տարածքներում, որոնք համարվում են ռիսկային, ի՞նչ լրացուցիչ պատշաճ ուսումնադիրության միջոցներ պետք է կիրառեմ:

***→ Այն դեպքում երբ կպարզվի, որ հաճախորդը կամ նրա իրական շահառուն հավանական գործունեություն են ծավալում ռիկսային համարվող ոլորտում կամ հսկողության տակ գտնվող երկրում, ապա պետք է իրականացվի խորացված պատշաճ ուսումնասիրություն, որը նախատեսված է հաճախորդի/իրական շահառուի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքելուն (գործունեության մանրամասները, երկրները, բաժնետերերը, բացասական տեղեկատվությունը և այլն:**

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը աննախադեպ մասշտաբներ ունեցող երևույթներ են: Դրանք ազդեցություն են ունենում առհասարակ հասարակության և երկրների տնտեսական զարգացման վրա: Սա հանցագործներին հնարավորություն է տալիս ներթափանցել ֆինանսական կազմակերպություններ, վերահսկել որոշակի տնտեսական ոլորտներ, կաշառել կառավարիչ ընկերություններին և կառավարություններին, ազդել քաղաքացիների կյանքի վրա և խարխլել այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են ժողովրդավարությունը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Փողերի լվացումը գործընթաց է, որի ընթացքում անօրինական կամ հանցավոր ճանապարհով ստացված գումարները, թվացյալ օրինականացվում են: Ապօրինի միջոցների լվացումը օգտագործվում է նաև ահաբեկչության ֆինանսավորման նպատակով: Ահաբեկչությունը կարող է ֆինանսավորվել նաև օրինական միջոցներով, որոնք օգտագործվում են ահաբեկչական գործողություն կատարելու համար: Դա կոչվում է «փողերի հակառակ լվացում»:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒԸ

«Ամունդի»-ն մասնակցում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին: Մեր պարտավորությունների ցանկացած խախտում առաջացնում է քաղաքացիական, քրեական, վարչական և կարգապահական պատժամիջոցներ տնօրենների, կառավարիչների և աշխատակիցների նկատմամբ: Բացի այդ, վտանգի տակ են «Ամունդի»-ի իմիջն ու հեղինակությունը:

Փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը հաճախ հիմնվում են բարդ ֆինանսական մեխանիզմների վրա, որոնց բացահայտումը պահանջում է զգոնության բարձր աստիճան և տեղեկատվությանը տիրապետող սուբյեկտների միջև գործողությունների լավ համակարգվածություն:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Համոզվեմ, որ տեղեկացված եմ այս թեմաների մասին, նույնիսկ եթե ինձ ուղղակիորեն չի վերաբերում,
- Ղեկավար լինելու դեպքում անեմ ամեն ինչ, որ իմ աշխատակիցները լավ տեղեկացված լինեն այս թեմաներից,
- Ակտիվորեն կիրառեմ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգերը,
- Հատուկ ուշադրություն դարձնեմ իմ հաճախորդների վերաբերյալ տեղեկացված լինելուն՝ նոր գործարար հարաբերություններ կառուցելիս և դրա ողջ գործողության ընթացքում,
- Միշտ զգոն լինեմ և որոնեմ ցանկացած անսովոր, բարդ գործարքներ, որոնք չունեն տեսանելի տնտեսական հիմնավորում և ակնհայտորեն կարող են անօրինական լինել,
- Խնդրեմ հաճախորդներին տրամադրել իրենց գործարքների վերաբերյալ հիմնավորված բացատրություն,
- Հրաժարվեմ իրականացնել որևէ գործարք, որը տնտեսապես հիմնավորված չէ կամ երբ առկա են կասկածներ այն նախաձեռնողների կամ դրանց շահառուների (իրական շահառուների իմացություն) ինքնության վերաբերյալ,
- Ծանուցեմ ցանկացած կասկածելի գործարքի մասին համապատասխանության բաժնի ֆինանսական անվտանգության դեպարտամենտին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Թերանամ կիրառել սահմանված ընթացակարգերը, օրինակ՝ առևտրային պառճառներով,
- Տեղեկացնեմ հաճախորդներին, որ նրանք հնարավոր է կասկածվում են փողերի լվացման մեջ կամ բացահայտեմ նման տեղեկատվություն երրորդ անձանց,
- Իրականացնեմ, խորհուրդ տամ կամ աջակցեմ տեղաբաշխման, քողարկման կամ կոնսոլիդացիայի որևէ գործարքի:

23 ՊԱՅՔԱՐ ՀԱՐԿԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԴԵՄ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Հարկերից խուսափելը հարկ վճարելուց հետևողական խուսափելու կամ անօրինական ճանապարհով այն նվազեցնելու գործողությունն է: Հարկերից խուսափելը վերաբերում է ինչպես ընկերություններին, այնպես էլ անհատներին: Այն կարող է դրսևորվել տարբեր ձևերով (մասնավորապես, եկամուտների ավելի ցածր մակարդակների հայտարարագրումը կամ այն չհայտարարագրելը և կապված է բարդ ֆինանսական մեխանիզմների (հատկապես միջսահմանային) հետ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

«FACTA»-ի (Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտ) եւ «AEOI»-ի (Տեղեկատվության Ավտոմատ Փոխանակում) կանոնները՝ երկու հարկային կարգավորումներ, որոնց պետք է համապատասխանի «Ամունդի»-ն: Այդ կարգավորումներն ապահովում են տեղեկատվության հասանելիություն տարբեր հարկային մարմինների համար և թույլ են տալիս պայքարել հարկերի վճարումից խուսափելու և հարկային խարդախության դեմ:

1. «FATCA»-ն ներդրվել է Միացյալ Նահանգներից դուրս բնակվող ամերիկյան հարկատուների («ամերիկացի անձանց») ակտիվների և եկամուտների մասին տեղեկություններ հավաքագրելու համար:

2. «AEOI»-ն «ՏՀՁԿ»-ի նախաձեռնությունն էր իրականացնելու տեղեկատվության բազմակողմանի փոխանակում այն հարկային ռեզիդենտներին պատկանող ակտիվների նույնականացման նպատակով ՝ որոնք բնակվում են իրենց երկրից դուրս (իրենց իրավազորությունից դուրս): Սա հարկատուների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) եկամուտների վերաբերյալ տեղեկատվության համակարգված և պարբերական բացահայտումն է այն երկրի կողմից, որտեղ վերջիններս եկամուտ են ստանում հօգուտ այն երկրի, որի ռեզիդենտ են իրենք հանդիսանում:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒԸ

«Ամունդի»-ն գտնում է, որ հետևողական և պատասխանատու հարկային մոտեցումը երկարաժամկետ ռազմավարության անբաժանելի մաս է:

«Ամունդի»-ն բոլոր հարկային հարաբերություններին վերաբերվում է անաչառությամբ եւ թափանցիկությամբ: Բոլոր իրականացվող գործողություններն ու գործարքներն ունեն ամուր տնտեսական հիմք, և «Ամունդին» չի խուսափում հարկերի վճարումից:

«Ամունդին» պարտավորվում է չնախաձեռնել և չառաջարկել գործողություններ զուտ հարկային նպատակներից ելնելով կամ աջակցել իր հաճախորդներին շրջանցել իրենց հարկային պարտավորությունները կամ գործել այն երկրներում , որոնց իրավական համակարգը ԵՄ-ի կողմից դասակարգված է որպես «չհամագործակցող» (հարկային դրախտներ) կամ որոնք չեն մասնակցում «Տեղեկատվության ավտոմատ փոխանակմանը»:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Միանգամայն թափանցիկ ձևով հետևեմ գործող օրենքներին ու կարգավորումներին այն երկրներում , որտեղ մենք գործունեություն ենք ծավալում,
- Հարկային կամ համապատասխանության բաժիններց թույլտվություն խնդրեմ նախքան որևէ ներդրումը «չհամագործակցող» երկրում կամ նահանգում ,
- Զգոն լինեմ, և անհապաղ զեկուցեմ համապատասխանության պատասխանատուին ցանկացած գործողության մասին, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն միտված է հարկային կանոնները շրջանցելուն,
- Վարեմ բոլոր հաճախորդների համար առանձին տեղեկատվություն, որը ներառում է նրանց հարկային ռեզիդենտության («AEOI») և քաղաքացիության չափանիշների («FATCA») վերաբերյալ և հավաստիանամ, որ այն թարմացվում է,
- Կասկածների դեպքում կապ հաստատեմ համապատասխանության պատասխանատուի հետ:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Միտումնավոր «պաշտպանեմ» «Ամունդի»-ին իր հարկային պարտավորոյթուններից,
- Հաճախորդին խորհուրդ տամ և/կամ մասնակցեմ այնպիսի ֆինանսական մեխանիզմներին, որոնք միտված են հարկային կանոնները շրջանցելուն,
- Հաճախորդի անունից ստորագրեմ հավաստագրեր (self-certification),
- Հեռացնեմ կամ թաքցնեմ որևէ տեղեկատվություն նպատակ հետապնդելով կոծկել «հարկային դրախտի» հետ կապված որևէ գործունեության մասին վկայող նյութ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Ես երկքաղաքացիություն ունեմ և ապրում եմ Միացյալ Նահանգներից դուրս: Չեմ կարծում, թե պիտի համարվեմ ԱՄՆ քաղաքացի:

→ Քանի որ Դուք ունեք երկքաղաքացիություն, Դուք համարվում եք «ԱՄՆ Անձ» դրանից բխող պարտավորություններով: Ի տարբերություն մյուս իրավական համակարգերի մեծ մասի՝ ԱՄՆ-ի հարկային պարտավորությունը կապված է քաղաքացիությանը, ոչ թե բնակության վայրին: Սա նշանակում է, որ ԱՄՆ քաղաքացիները, որոնք ապրում են արտերկրում, պետք է ամենամյա հարկային հայտարարագիր ներկայացնեն՝ անկախ իրենց բնակության վայրից:

24 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Ես Ֆրանսիայի և ԱՄՆ-ի երկքաղաքացի եմ և հանդիսանում եմ «Ամունդի»-ի աշխատակից: Ո՞ր օրենսդրությանը ես պետք է հետևեմ:

→ Դուք այս դեպքում համարվում եք «Ամունդի»-ի հետ փոխկապված «ԱՄՆ Անձ»: Այս դեպքում՝, անկախ ձեր գտնվելու վայրից, Դուք պետք է տեղեկացնեք մարդկային ռեսուրսների բաժնին Ձեր կարգավիճակի մասին և կարդաք տեխնիկական գրառումը, որը նկարագրում է այն պարտավորությունները, որոնք պետք է կատարել Արտասահմանյան ակտիվների վերահսկողության գրասենյակի («OFAC») իրավական դրույթների համաձայն:

Նոր հաճախորդը ցանկանում է ներդրում կատարել ֆոնդի (UCITS) փայերում, և նրա կազմակերպությունը գտնվում է Հոնդուրասում: Կարո՞ղ եմ արդյոք ավարտին հասցնել գործարքը:

→ Զգուշացում. նախքան «Ամունդի»-ի՝ «Երկրների ռիսկայնության քաղաքականության» չորրորդ խմբի մեջ դասակարգված երկրներում գտնվող նոր անմիջական հաճախորդներ ձեռք բերելը՝ պետք է նախնական թույլտվություն ստանալ տվյալ կազմակերպության համապատասպանության պատասխանատուից: Հետևաբար, Դուք մշտապես պետք է հղում կատարեք «Երկրների ռիսկայնության քաղաքականությանը» և ներկայացնեք Ձեր առաջարկը համապատասխանության պատասխանատուին՝ այն հաստատելու և առևտրային հարաբերությունների հեռանկարների շուրջ ձեռնակվող գործողությունները շարունակելու համար:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Միջազգային պատժամիջոցները մեկ կամ մի քանի պետությունների կողմից ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց նկատմամբ (օրինակ՝ ակտիվների սառեցում) և երկրների կամ կառավարությունների դեմ (էմբարգոյի միջոցներ) ձեռնարկված միջոցներ են: Պատժամիջոցներն ընդունվում են ահաբեկչության, միջուկային զենքի տարածման և մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարելու համար:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝

«Ամունդի Խմբում» կիրառելի միջազգային պատժամիջոցների մեծ մասը սահմանվում, վերահսկվում և իրացվում է ՄԱԿ-ի Ավտանգության խորհրդի, Եվրոպական Միության, ինչպես նաև համապատասխան տեղական իշխանությունների կողմից:

«ԱՄՈՒՆԴԻ»-ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒԸ

«Ամունդի»-ն ձգտում է ապահովել խիստ համապատասխանություն միջազգային պատժամիջոցների վերաբերյալ օրենսդրությանը, որը կարող է լինել բարդ և անդրսահմանային բնույթի՝ այն երկրներում և տարածքներում, որտեղ Ընկերությունը գործունեություն է ծավալում: Այս պահանջներին համապատասխանությունն իրականացվում է միջազգային պատժամիջոցների վերաբերյալ օրենսդրության համապատասխանության ապահովմանն ուղղված ներքին ընթացակարգերի և ծրագրերի ամրապնդմամբ: Սա կիրառելի է «Ամունդի»-ի բոլոր աշխատակիցների նկատմամբ՝ անկախ երկրից և իրենց կազմակերպության չափից: «Ամունդի»-ն չի հանդուրժում միջազգային պատժամիջոցների որևէ խախտում:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Քաջածանոթ լինեմ, հասկանամ և հետևեմ «Ամունդի»-ի ներքին քաղաքականությանն ու ընթացակարգերին,
- Մասնակցեմ ամենամյա վերապատրաստման դասընթացներին, որոնք պարտադիր են բոլոր աշխատակիցների համար, ինչպես նաև լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին, որոնք կիրառելի են որոշակի անձանց նկատմամբ,
- Ուշադիր լինեմ, գտնեմ և անմիջապես ծանուցեմ համապատասխանության բաժնի պատժամիջոցների գծով ղեկավարին միջազգային պատժամիջոցների ցանկացած խախտման կամ խախտման փորձի մասին, ինչպես նաև դրանք շրջանցելուն ուղղված ցանկացած ուղղակի կամ անուղղակի գործողության մասին,
- Թարմացնեմ հաճախորդների վերաբերյալ տվյալները և ապահովեմ դրանց ամբողջականությունը,
- Հսկեմ գործողությունների համապատասխանությունը միջազգային պատժամիջոցներին,
- Կասկածներ ունենալու դեպքում կապ հաստատեմ իմ ղեկավարի կամ համապատասխանության պատասխանատուի հետ:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Մասնակցեմ որևէ ֆինանսական գործարքի, որի բարդությունն արդարեցված չէ,
- Հեռացնեմ կամ թաքցնեմ որևէ տեղեկատվություն՝ նպատակ ունենալով կոծկել գործարքին առնչվող փաստեր՝ կնքված այն երկրերի կամ անձանց հետ, որոնք ենթակա են միջազգային պատժամիջոցների,
- Փոփոխեմ գործիքները կամ SS գործընթացները՝ միջազգային պատժամիջոցների առկայության ռիսկը բացահայտող օգտակար տեղեկատվությունը հեռացնելու նպատակով,
- Խորհրդատվություն տրամադրեմ հաճախորդին և/կամ մասնակցեմ ֆինանսական համաձայնություններին, որոնք նպատակ ունեն շրջանցել միջազգային պատժամիջոցները:

25 ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Խարդախությունը դիտավորյալ արարք է, որը կատարվել է նյութական կամ ոչ նյութական օգուտ ստանալու նպատակով ի վնաս երրորդ անձի կամ կազմակերպության:

Օրենքների, կանոնակարգերի կամ ներքին կանոնների խախտման դեպքում խարդախությունը բնութագրվում է այլ անձանց իրավունքների ոտնահարմամբ և որևէ գործողության, գործողությունների կամ դրանց բնութագրիչների մասնակի կամ ամբողջական քողարկմամբ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝

Կախված ծագման աղբյուրից՝ կա խարդախության 2 տեսակ.

- Արտաքին խարդախություն. այն իրականացվում է ֆիզիկական անձանց (հաճախորդների կամ այլ կերպ) կողմից, ինքնուրույն կամ խմբակային՝ դրամական միջոցներ, փաստաթղթեր կամ տեղեկություն ստանալու նպատակով, որը նրանք կարող են օգտագործել հօգուտ իրենց սեփական շահերի և ի վնաս ընկերության, հաճախորդների կամ երրորդ անձանց:
- Ներքին խարդախություն. վնասակար գործողություն, որը կատարվել է աշխատակցի կողմից՝ ի վնաս իր ընկերության կամ իր ընկերության կողմից կառավարվող ցանկացած երրորդ կողմի շահերի:
- Խարդախությունը կարող է նաև բնութագրվել որպես վնասակար արարք, որը կատարվել է աշխատակցի կողմից ընկերությունից դուրս անձանց մեղսակցության պայմաններում: Սա կոչվում է խառը տիպի խարդախություն:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒԸ

«Ամունդի»-ն մեծ նշանակություն է տալիս խարդախության կանխարգելմանը, քանի որ խարդախության իրականացման համար օգտագործվում են մեծաթիվ մեթոդներ, որոնք դառնում են ավելի բարդ, հատկապես հաշվի առնելով թվային փոխակերպումը:

Խարդախության դեպքերի կտրուկ աճի դեմ պայքարելու համար կարևոր է խնդիրը լուծել ինչպես վերին, այնպես էլ ստորին մակարդակներում: Բոլոր աշխատակիցները, անկախ իրենց պարտականություններից, կաևոր դեր ունեն խարդախության կանխարգելման գործում: Ընկերության յուրաքանչյուր աշխատակցի ամենօրյա զգոնությամբ մենք կարող ենք բացահայտել և կանխել խարդախության փորձերը:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Քաջածանոթ լինեմ խարդախության կանխարգելման վերաբերյալ օրենսդրությանը և առաջադեմ փորձին, և կիրառեմ դրանք պատասխանատու կերպով՝ մշտական զգոնության պայմաններում,
- Խարդախության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում անմիջապես զգուշացնեմ իմ ղեկավարին, ինչպես նաև համապատասխանության բաժնի համապատասխան խմբին, որպեսզի նրանք կարողանան արագ գործել,
- Եթե կասկած ունեմ էլեկտրոնային նամակի մասով, որը խնդրում է անսովոր ֆինանսական գործարք կատարել, ուղարկեմ այն իմ ղեկավարին և տեղեկացնեմ համապատասխանության բաժնին,
- Եթե ես ղեկավար եմ, գնահատեմ իմ գործունեության հետ կապված խարդախության ռիսկը և ապահովեմ բարեվարքության սկզբունքների, ինչպես նաև ընդհանուր մասնագիտական կանոնների պահպանումը,
- Իրականացնեմ խարդախության ռիսկերի վերլուծություն բոլոր նոր ծառայությունների և պրոդուկտների նախագծման գործընթացի սկզբում:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Օգտվեմ տեղեկատվությունից, որը ինձ թույլ կտա խարդախություն կատարել հօգուտ ինձ կամ երրորդ կողմի,
- Փոխանցել տեղեկատվություն երրորդ կողմի, որը թույլ կտա նրան խարդախություն կատարել,
- Պատասխանեմ անհայտ հասցեատիրոջից ստացված էլեկտրոնային նամակին, որը խնդրում է իրականացնել անսովոր գործարք կամ նրան տրամադրել «Ամունդի»-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն,
- Հայտնեմ իմ գաղտնաբառերը որևէ մեկին, տրամադրեմ իմ անցագիրը կամ թողնեմ գաղտնի տեղեկություններ կամ փաստաթղթեր իմ գրասեղանին,
- Թողնեմ գաղտնի տեղեկություններ կամ փաստաթղթեր իմ գրասեղանին կամ այլ աշխատակիցների համար տեսանելի վայրում (կոնֆերանս դահլիճներ, լուսապատճեններ եւ այլն),
- Հրապարակայնորեն քննարկեմ զգայուն հարցեր, որոնք կարող են վերաբերել «Ամունդի»-ին,
- Օգտագործեմ արտաքին միջոցներ (արտաքին կոշտ սկավառակներ կամ «USB» կրիչներ)՝ առանց նախազգուշական միջոցներ ձեռնարկելու կամ օգտագործեմ չպաշտպանված արտաքին միջոցներ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Հենց նոր ստացել եմ էլեկտրոնային նամակ անհայտ հասցեատիրոջից, որն ինձ խնդրում է իմ ձեռնարկության տնօրենի անունից գործարք կատարել: Ի՞նչ պետք է անեմ:

→ Քանի որ այս իրավիճակը նորմալ չէ և կարող է հանդիսանալ խարդախություն տնօրենի դեմ, Դուք պետք է այդ մասին տեղեկացնեք Ձեր ղեկավարին և էլեկտրոնային նամակ ուղարկեք ՏՏ բաժին՝ նամակն ուղարկողի նույնականացման համար: Տեղեկացրեք նաև համապատասխանության բաժնին:

Հաճախորդը միաժամանակ պահանջում է փոփոխել իր բանկային քաղվածքը և մարել իր պորտֆելի բոլոր փայերը: Ի՞նչ պետք է անեմ:

→ Բարձր զգոնություն պետք է դրսևորվի նպանատիպ հարցումների դեպքում: Կապվեք հաճախորդի հետ, որպեսզի հաստատեք, որ հարցումներն արվում են իր կողմից և այդ հարցումները մշակեք ըստ այն անվտանգության միջոցների, որոնք կիրառվում են նման դեպքերում:

26 ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Առավոտյան սուրճի ընդմիջման ընթացքում զրուցելիս հասկացա, որ ցուցակված ընկերություններից մեկը ծրագրում է ձեռք բերել մեկ այլ ցուցակված ընկերության: Այս տեղեկատվությունը դեռ հրապարակային չէ: Կարո՞ղ եմ արդյոք այս ընկերությունների արժեթղթերով ֆինանսական գործարք կատարել:

→ Ո՛չ: Ֆինանսական շուկաները կառավարող օրենսդրությունը հիմնված է ներդրողների համար հավասար տեղեկատվության հիման վրա: Այլ կերպ ասած, նախքան տեղեկատվության հրապարակային դառնալը որևէ գործարքի կնքում չի թույլատրվում:

Ընկերներիցս մեկը խնդրել է ինձ խորհուրդ տալ իրեն իր ներդրումների կառավարման վերաբերյալ: Կարո՞ղ եմ նրան խորհուրդ տալ ձեռք բերել կամ վաճառել արժեթուղթ, որի մասով ես հանդիսանում եմ ինսայդեր:

→ Ո՛չ: Որպես ինսայդեր Դուք պարտավորվել եք ձեռնպահ մնալ նման գործողությունից: Ձեզ խստորեն արգելվում է հաղորդել, տարածել կամ օգտագործել Ձեր տրամադրության տակ գտնվող որևէ ինսայդերական տեղեկատվություն՝ անկախ նրանից գործարքը իրականացվելու է հօգուտ Ձեզ, թե երրորդ կողմի:

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ինսայդերական (ներքին) գաղտնի տեղեկատվության հիման վրա առևտուրը, բաժնետոմսերի գների մանիպուլյացիան և սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության տարածումը շուկայի չարաշահման օրինակներ են: Շուկայի չարաշահման դեմ պայքարը նշանակում է շուկաների բարեխղճության ու թափանցիկության, ինչպես նաև հանրային վստահության պահպանում: Որպես այդպիսին բոլորի պատասխանատվությունն է հարգել ներդրողների միջև տեղեկատվության հավասարության սկզբունքը: Այս կանոնները խախտելու դեպքում, ներդրումային ծառայություններ մատուցողը և իր իրավասության տակ գտնվող ֆիզիկական անձինք կարող են ենթարկվել կարգապահական, ֆինանսական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝

Եթե ցուցակված որևէ ընկերության վերաբերվող գաղտնի տեղեկատվությունը հրապարակվում է, ապա այդ «ինսայդերական» տեղեկատվությունը կարող է ազդեցություն ունենալ որոշակի ֆինանսական գործիքների կամ դրանց հետ կապված այլ շուկայական գործիքների գների վրա:

Այս տեղեկատվության օգտագործումը, փոխանցումը և խորհուրդ տալը սեփական կամ երրորդ կողմի համար համարվում են ինսայդերական գործարքներ և, հետևաբար, խստիվ արգելվում են և ենթակա են խիստ պատիժների: Գնի մանիպուլյացիան ներառում է գործիքի գնի վրա ազդելու փորձ՝ խարդախ մեխանիզմների օգտագործմամբ, որոնք խաթարում են շուկաների ամբողջականությունը և ներառում են՝

-կեղծ տեղեկատվության տարածում,

-պատվերների տեղադրում, որոնք նախատեսված չեն կատարման համար կամ որոնք կարող են դրական/բացասական ազդանշան տալ տվյալ գործիքի առաջարկի կամ պահանջարկի վերաբերյալ:

Սեփական շահի համար կամ հօգուտ երրորդ անձի այս տեղեկատվության օգտագործումը, փոխանցումը կամ դրա հիման վրա խորհուրդ տալը իրենից ներկայացնում է ինսայդերական տեղեկատվության հիման վրա կատարված գործարք և որպես այդպիսին խստորեն արգելվում է և ենթակա է խիստ պատժամիջոցների:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒԸ

«Ամունդի»-ն ինսայդերական տեղեկատվությունը պաշտպանելու նպատակով ստեղծել է տեղեկատվական խոչընդոտների (information barriers) համակարգ: Այս դրույթները նշանակում են, որ մարդիկ, ում հասանելի է ինսայդերական տեղեկատվություն, պետք է հետևեն ներքին ինսայդերական տեղեկատվության կառավարման ընթացակարգերին, որը գործում է իրենց կազմակերպության ներսում:

Այդ խոչընդոտները նաև ապահովում են իրենց գործառույթով պայմանավորված ինսայդերական տեղեկատվությանը հասանելիություն ունեցող և չունեցող մարդկանց միջև հաղորդակցության խիստ վերահսկողությունը: Մասնավորապես, սա ներառում է զգայուն գործառույթներ կամ գործողություններ իրականացնող մարդկանց ֆիզիկական տարանջատումը նրանցից, ովքեր այդպիսի գործառույթ կամ գործողություն չեն իրականացնում:

Ամունդին իր աշխատակիցների համար կազմակերպում է կանոնավոր ուսուցողական դասընթացներ՝ բարձրացնելու նրանց իրազեկվածությունը լավագույն փորձի և խուսափելու ենթակա գործելակերպի, ինչպես նաև շուկայական չարաշահման փորձերի հետ կապված ռիսկերի վերաբերյալ: Ամունդին ունի այն գործարքների մշտադիտարկման համակարգ, որոնք կարող են խաթարել շուկաների ամբողջականությունը:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Լինեմ ուշադիր և ձեռնարկեմ բոլոր անհրաժեշտ միջոցները որևէ ինսայդերական տեղեկատվության բացահայտումից խուսափելու համար: Սա նշանակում է հարգել գործող տեղեկատվական պատնեշները,
- Եթե ես ինսայդերների ցուցակում եմ, հետևեմ դրանից բխող ձեռնպահ մնալու պարտավորություններին,
- Եթե կարծում եմ, որ տիրապետում եմ ինսայդերական տեղեկատվության, պետք է հայտնեմ իմ ղեկավարին, ով կտեղեկացնի համապատասխանության պատասխանատուին,
- Անհապաղ հայտնեմ համապատասխանության բաժնին ցանկացած գործարքի մասին, որտեղ առկա է շուկայի չարաշահման կասկած, որը վերլուծությունից հետո կվճռի անհրաժեշտ է գործարքի մասին զեկուցել ֆինանսական շուկաների համապատասխան մարմնին, թե՝ոչ,
- Պահպանեմ ինձ հայտնի դարձած կասկածելի գործարքների գաղտնի բնույթը, չհաղորդակցվեմ նրանց հետ, ովքեր կասկածվում են շուկայի չարաշահման մեջ անկախ նրանից դա ապացուցված է, թե՝ ոչ:
- Սահմանափակվեմ Ամունդիի կողմից իմ պարտականությունների համատեքստում թույլատրված կապի ալիքների ցանկի խիստ օգտագործմամբ:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Օգտագործեմ ինսայդերական տեղեկատվություն ֆինանսական շուկաներում արժեթղթեր ձեռք բերելիս կամ փոխանցելիս, լինի դա իմ հաշվին, թե «Ամունդի»-ի կամ երրորդ կողմի անունից,
- Հաղորդեմ ինսայդերական տեղեկատվություն երրորդ կողմի՝ «Ամունդի»-ից դուրս անձանց կամ նմանատիպ տեղեկատվություն ստանալու իրավասություն չունեցող աշխատակիցներին, եթե դա դուրս է իմ պարտավորությունների շրջանակից,
- Գների հետ կապված մանիպուլյացիներ կատարեմ ազատ գնագոյացմանը միջամտելու համար՝ ապակողմնորոշելով հանրությանը կամ նպատակ հետապնդելով շուկայում գերիշխող դիրքի հասնել,
- Առաջարկեմ որևէ երրորդ կողմի («Ամունդի»-ի կամ «Կրեդի Ագրիկոլ Խմբի» մեջ մտնող ընկերության աշխատակցի կամ արտաքին երրորդ անձի և այլն) ներդրում կատարել արժեթղթում՝ հիմնվելով ինսայդերական տեղեկատվության վրա:

27 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԸ

ՍԱՀՄԱՆՈՒՄ

Սոցիալական ցանցեր եզրույթը հիմնականում վերաբերում է բոլոր կայքերին, որոնք կարող են օգտագործվել անձնական կամ մասնագիտական կապերի համար և տեղեկատվություն ու կարծիքներ փոխանակելու նպատակով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝

Սոցիալական լրատվամիջոցները (սոցիալական ցանցեր, բլոգեր, ֆորումներ և այլն) այժմ մեր առօրյա կյանքի մի մասն են և վերաբերում են «Ամունդի»-ի բոլոր աշխատակիցներին ինչպես անձնական, այնպես էլ մասնագիտական մակարդակներում: Այնուամենայնիվ, նրանք իրենցից որոշակի ռիսկեր են ներկայացնում: Հաշվի առնելով զանազան մեդիա հարթակների քանակը և դրանցում փոխանակվող տեղեկատվության ծավալը, այս տեսակ հաղորդակցության տիրապետելը դարձել է իրական մարտահրավեր:

«ԱՄՈՒՆԴԻ»-Ի ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒԸ

«Ամունդի»-ն ներկա է սոցիալական ցանցերից շատերում («Twitter», «Facebook», «LinkedIn» և այլն), որպեսզի կարողանա հաղորդակցվել իր հաճախորդների, բաժնետերերի հետ՝ միևնույն ժամանակ հետևելով արվող մեկնաբանություններին: Բացառությամբ չարաշահման դեպքերի՝ «Ամունդի»-ի բոլոր աշխատակիցներն ազատ են օգտվելու կարծիք արտահայտելու ազատությունից ինչպես ընկերության ներսում, այնպես էլ դրանից դուրս: Այնուամենայնիվ, բոլորը պետք է պատասխանատու վարքագիծ դրսևորեն՝ պատշաճ վարվեցողությամբ և լավագույն փորձի կիրառմամբ: Աշխատակիցները կարող են օգտվել սոցիալական ցանցերից իրենց անձնական նպատակների համար իրենց աշխատավայրում՝ պայմանով, որ նրանք չեն չարաշահի այս արտոնությունը, այլ կօգտագործեն այն խելամտորեն, ըստ անհրաժեշտության և առանց իրենց կարծիքի ազատությունը օգտագործելու ի վնաս ընկերության, տնօրենների կամ գործընկերների:

ԵՍ ՊԵՏՔ Է՝

- Հարգեմ գաղտնիության և գաղտնապահության կանոնները, որոնց առումով մասնագիտական պարտավորություն եմ ստանձնել,
- Իրազեկ լինեմ օգտագործման ընդհանուր պայմաններից առ այն, թե ինչպես կարող են օգտագործվել իմ անձնական տվյալները և համացանցում տեղադրված տեղեկատվությունը,
- Հատուկ ուշադրություն դարձնեմ այն սոցիալական ցանցերին, որոնց սերվերները գտնվում են օտար երկրի տարածքում, որոնք կարող են Ֆրանսիայից տարբերվող անձնական տվյալների պաշտպանության կանոններ ունենալ,
- Ստուգեմ կարգավորող գործառնությունները համոզվելու համար, որ էջի և մեկնաբանությունների գաղտնիությունը պաշտպանվում է,
- Ընդգծեմ, որ իմ դիտարկումները բացառապես իմ պատասխանատվությունն են և արտահայտում են իմ անձնական կարծիքը,
- Ուղղակիորեն չմիջամտեմ, եթե բացասական կամ զրպարտական մեկնաբանություններ կարդամ «Ամունդի»-ի կամ «Կրեդի Ագրիկոլ Խմբի» մասին, որպեսզի խուսափեմ դրանց հեղինակներին ավելի մեծ ուշադրության արժանացնելուց: Նման մեկնաբանությունների հանդիպելու դեպքում դրանք փոխանցեմ հաղորդակցության բաժին,
- Եթե կասկածներ ունեմ տեղեկատվության բնույթի վերաբերյալ, ոչինչ չանեմ և հարցնեմ իմ ղեկավարին:

ԵՍ ՉՊԵՏՔ Է՝

- Շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործողություններ կատարեմ սոցիալական ցանցերում առանց հաղորդակցության բաժնից թույլտվություն ստանալու,
- «Ամունդի»-ի անունից պաշտոնական հայտարարություններ անեմ, եթե հաղորդակցության բաժնի կողմից նշանակված խոսնակ չեմ հանդիսանում,
- Դիտարկումներ անեմ, որոնք կարող են վնասել իմ պաշտոնը կամ «Ամունդի»-ն և իր աշխատակիցներին,
- Մեկնաբանություններ անեմ, ինչպես օրինակ չարամիտ քննադատություն կամ վիրավորանքներ, կամ նսեմացնող, անվանարկող կամ էլ անպարկեշտ բնույթի դիտարկումներ, բացահայտեմ որևէ գաղտնի տեղեկատվություն,
- Որևէ կերպ հաղորդակցության մեջ մտնեմ աջակցելու քաղաքական, հասարակական կամ կրոնական հանձնառության՝ կապելով այն «Ամունդի»-ի ներսում իմ մասնագիտական գործունեության հետ,
- «Ամունդի»-ի կողմից հեղինակային իրավունքով պաշտպանվող տեղեկատվությունն օգտագործեմ՝ առանց կանխավ ստանալու գրավոր համաձայնություն համապատասխան բաժնից կամ դա չլինելու դեպքում հաղորդակցության բաժնից:

ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Իմ գործընկերներից մեկի հրաժեշտի հավաքույթի ժամանակ որոշ լուսանկարներ արեցի և կցանկանայի դրանք հրապարակել իմ անձնական էջում:

→ Անձի նկարի պաշտպանության իրավունքը հարգելու համար նախապես թույլտվություն վերցրեք մասնակից մարդկանցից: Ցանկացած հրապարակման դեպքում, Դուք պետք է գնահատեք արդյո՞ք կա Ձեր կամ որևէ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հեղինակությանը մնասելու ռիսկ:

Որպես մի նոր նախագծի մաս, գործընկերներիցս մեկն առաջարկեց ստեղծել խումբ «LinkedIn»-ում, որպեսզի կարողանանք տեղեկատվություն փոխանակել և իրար ուղարկենք փաստաթղթեր:

→ Մերժե՛ք: «Ամունդի»-ն թույլ չի տալիս իր աշխատակիցներին սոցիալական ցանցերում աշխատանքային գործունեություն ծավալել՝ բացառությամբ խիստ հազվագյուտ դեպքերի: Քննարկե՛ք նախագիծը հաղորդակցության բաժնի հետ:

Ուզում եմ ստեղծել կամ թարմացնել «LinkedIn»-ի անձնական էջս և հրապարակել տեղեկատվություն «Ամունդի»-ի հետ կապված իմ գործունեության վերաբերյալ:

→ Դուք կարող եք ներկայացնել Ձեր պարտականություններն ու Ընկերության գործունեությունն ընդհանուր բնութագրիչներով, սակայն մի՛ տրամադրեք գաղտնի տեղեկատվություն կամ մի՛ նշեք Ձեր «զգայուն» պարտականություններից

«Ամունդի»

504 260 885 եվրո կանոնադրական կապիտալով ֆրանսիական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Վարկային կազմակերպությունը կարգավորվում է ֆրանսիայի արժութային-ֆինանսական օրենսգրքով

Իրավաբանական հասցե: 91-93, «boulevard Pasteur» 75015 Փարիզ, Ֆրանսիա

Փոստային հասցե: 90, «boulevard Pasteur», CS21564, 75730 Փարիզ cedex 15, Ֆրանսիա

Հեռախոսահամար: +33 (0)1 76 33 30 30

SIREN համարը: 314 222 902 RCS Փարիզ

«LEI»: 9695 00 10FL2T1TJKR5 31

Կայք www.amundi.com